# Շահան Շահնուր

# ՈՂՋ ԵՂԵՌՆԻՑ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

# НЕРСЕС ШНОРАЛИ

# ЭЛЕГИЯ НА ВЗЯТИЕ ЭДЕССЫ

Текст и комментарии
**МАНИК МКРТЧЯН**

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1973

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Ա II/51948

# ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ

Քննական բնագիր, բանասիրական դիտողություններ, ծանոթագրություններ
**ՄԱՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1973

8 Ap 1
Ն 17

*Ներսես Շնորհալին հայ մշակույթի կարկառուն ներկայացուցիչներից է։ Նա ապրել և ստեղծագործել է XII դարում՝ Կիլիկիայում։ Մեծ է ու բազմազան Շնորհալու ժառանգությունը՝ բանաստեղծական հրապարակախոսական ու երաժշտական։*

*Այս գրքում ամփոփված է Ներսես Շնորհալու գլուխ գործոց «Ողբ Եդեսիոյ» երկի քննական բնագիրը, որ կազմված է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր ընդօրինակությունների և առ այսոր եղած տպագիր օրինակների հիման վրա։*

Պատասխանատու խմբագիր՝ Փ. ԱՆԹԱԲՅԱՆ

Ն $\frac{074-055}{703(02)-73}$ 61—74

## ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ ԵՎ ՆՐԱ «ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ»-Ն

Ներսես Շնորհալին բացառիկ դեր է խաղացել հայ միջնադարի հոգևոր մշակույթի պատմության մեջ։ Այդ ականավոր գործչի ու մեծ հայրենասերի, նշանավոր բանաստեղծի ու մեծատաղանդ երաժշտի անվան հետ է կապված մի ամբողջ ժամանակահատված՝ XII դարի 20—70-ական թվականների հայ մշակույթի զարգացման պատմությունը։ Դա մի բարդ ժամանակաշրջան էր, երբ մայր հայրենիքում սեփական պետականությունից ու անկախությունից զրկված ժողովրդի բավական մեծ մի հատված, քաղաքական հանգամանքների բերումով գաղթած Բյուզանդական կայսրության հարավ-արևելյան գավառները՝ Փոքր Հայք, Հյուսիսային Ասորիք ու Կիլիկիա, կենաց պայքար էր մղում վերականգնելու իր պետական-քաղաքական ինքնուրույնությունը՝ հաճախ սուրը խաչաձևելով Իկոնիայի սուլթանների, Էուբյան ամիրաների, Բյուզանդական կայսրների ու խաչակիրների հետ՝ հաստատելով գոյության իր իրավունքը։ Շնորհալու ստեղծագործությունը դարձավ այդ մաքառման գեղարվեստական արտահայտությունը և իր հայրենասիրական բովանդակությամբ պայմանավորեց կիլիկյան ընդհանուր մշակույթի հետագա ընթացքը։

Ներսես Շնորհալին ծնվել է 1101 կամ 1102 թվականին Ծովք դղյակում, որը գտնվում էր Եփրատից արևմուտք ընկած Տլուք գա-

վառում, Անտիոքից հյուսիս, դեպի Տավրոսյան լեռնաշղթան ձգվող Սև լեռան (Ամանոս) ժայռակոփ բարձունքներից մեկի վրա: Տիրքը մասն էր կազմում Եփրատացիք կամ Միջերկրայք կոչված բավական ընդարձակ երկրի, որտեղ XI դարի վերջերից սկսած երկու տասնամյակ շարունակ իշխում էր Գող Վասիլ հայ իշխանը: Սրա հովանավորությամբ Սև լեռան վանքերում (Կարմիր վանք, Շուղր և այլն) սկսել էր ծաղկում ապրել հայոց հոգևոր մշակույթը: Այդ միջավայրում էլ անում ու հասակ է առնում Շնորհալին՝ շրջապատված հոգատար մարդկանցով և հմուտ գիտնականներով:

Ներսեսի հայրը՝ Ծովքի Պահլավունի իշխան Ապիրատը, մոր կողմից Գրիգոր Մագիստրոսի թոռն էր: Նրա թե հինգ նրա միջնեկ որդիների՝ Գրիգորի (ծնվ. մոտավորապես 1095 թ.) և Ներսեսի դաստիարակությունն իր վրա է վերցնում Գրիգոր Մագիստրոսի որդին՝ ժամանակի կաթողիկոս Գրիգոր Բ-ն (Գրիգոր Ավագ Վկայասեր): Վերջինս մեռնում է 1105 թվականին՝ զարմիկներին հանձնելով իր աթոռակից և հաջորդ Բարսեղ Անեցի կաթողիկոսի խնամքին ու հոգածությանը: Եղբայրներն իրենց ուսումնառությունն անցնում են Քեսունի մոտ գտնվող Կարմիր վանքում, Մեծ Հայքից այնտեղ տեղափոխված անվանի գիտնական և մանկավարժ Ստեփանոս Մանուկի ձեռքի տակ: 1113 թ., Բարսեղ Անեցու մահվանից հետո, դեռ պատանի հասակում կաթողիկոս է օծվում Շնորհալու եղբայրը—Գրիգորը (Գրիգոր Գ.): Իսկ որոշ ժամանակ անց, երբ Թոռոս քաղաքի կոմսը խլում է Քեսունի իշխանությունը, եղբայրները ստիպված են լինում կաթողիկոսարանը Կարմիր վանքից տեղափոխել իրենց հայրենական Ծովք ամրոցը: Ներսեսը մինչև 1150 թ. ապրել ու ստեղծագործել է Ծովքում, այնուհետև տեղափոխվել է Եփրատի աջ ափին գտնվող Հռոմկլա անառիկ բերդը, որը գնվեց մի լատին իշխանից և Ծովքից հետո դարձավ հայոց կաթողիկոսանիստը: 1166 թ. Շնորհալին իր եղբոր փոխարեն ընտրվեց կաթողիկոս: Հռոմկլայում էլ 1173 թ. նա կնքեց իր մահկանացուն:

Շնորհալին թողել է հարուստ և բազմաժանր ժառանգություն, որը մեզ հասել է գրեթե անկորուստ շնորհիվ այն հանգամանքի,

որ ամբողջ միջնադարում նրա տաղերն ու մեղեդիները, շարականներն ու գանձերը, աղոթերգերն ու հանելուկները, խրատականներն ու ծավալուն քերթվածները, հրապարակախոսական ու մեկնողական արձակը սիրվել և շարունակ արտագրվել են գրիչների ձեռքով: Վիթխարի քանակություն կազմող հայերեն ձեռագրերի մեջ նրա երկերի ընդօրինակությունները բավական մեծ բաժին են կազմում: Խորն են Շնորհալու ստեղծագործության արմատները: Դրանք սնունդ են առնում հայոց պատմության նվիրական ակունքներից, գնում հասնում են Մաշտոց ու Խորենացի, Եղիշե ու Նարեկացի և, հարստացած ինչպես հայ մատենագրության, այնպես էլ ժողովրդական բանահյուսության ավանդներով, մեր առաջ բացում են քաղաքացի-բանաստեղծի աշխարհը: Դժվար է Շնորհալուն պատկերացնել ներանձնացյալ կրոնավորի դերում: Նրա պոեզիան, անտերունչ ժողովրդի քաղաքական ճակատագրով համակված նրա հրապարակախոսությունը լավագույնս բնութագրում են ակտիվ ու շրջահայաց գործչին, որը բարոյական վերադաստիարակման ու մաքրագործման խրատներ է տալիս և, մանավանդ, միասնության ու համախմբման կոչ է հղում իր ցրված ժողովրդի զավակներին: Նրա լավագույն երկերը քաղաքական ու հայրենասիրական հզոր շեշտ ունեն և այդ իմաստով կարող են դրվել Խորենացու և Եղիշեի էջերի կողքին:

Շնորհալին ընդարձակեց հայ բանաստեղծության ինչպես թեմատիկ ընդգրկման, այնպես էլ ժանրային սահմանները: Նրա ստեղծագործությունը այդ իմաստով մի նոր աստիճան է հայ գեղարվեստական մտքի զարգացման մեջ: Նա իր բարձր ու հեշտընկալ արվեստով զարգացրեց այն ավանդները, որոնք գալիս էին մեր հոգևոր հին երգարանից՝ «Շարական»-ից, Գրիգոր Նարեկացուց, Գրիգոր Մագիստրոսից և իր անմիջական նախորդ Հովհաննես Սարկավագ Իմաստասերից: Նրան հարազատ են և՛ Նարեկացու հոգեկան խռովքն ու պաշտամունքի հասնող սքանչացումը բնության գեղեցկությունների առաջ, և՛ Մագիստրոսի մեծավայելուչ խոսքը, բայց ազատված ոճի խրթնությունից, և՛ բնության ձայնին ունկնդրելու, արվեստը բնությանը (իրականությանը) մոտեցնելու՝ այն բնական դարձնելու սարկավագյան ըմբռնումը:

ծնորհալու ժամանակ, երբ մեզանում արդեն «վերածնության թարմ ոգին թափանցել էր նաև վանքերի խուցերը» (Մ. Աբեղյան), կյանքը առաջադրում էր գրականության դերի նոր ըմբռնում. բանաստեղծությունը կարիք էր զգում «տեսակցության» ունկնդիրների ավելի լայն շրջանի հետ և անհրաժեշտաբար միտում ուներ խրատելու, սովորեցնելու: Պատահական չէ, որ Շնորհալին դիմում է պարզ ոճին, ինչպես ինքն է ասում՝ «մեկին բանին»: Նա գրում է հանելուկներ՝ «վասն ուրախութեան մարդկան», իսկ Կիրակոս Գանձակեցի պատմիչը, անշուշտ հիմնվելով ճշմարիտ վկայությունների վրա, հանելուկների ստեղծման շարժառիթը իրավացիորեն համարում է այն, որ դրանք ասվեն «ի գինարբուս և ի հարսանիս»[1]:

Շնորհալին, այսպիսով, մեծ կարևորություն է տալիս բանաստեղծության կիրառական դերին, նրա օգտագործվելու հանգամանքին, ընդ որում ոչ միայն եկեղեցիներում ու վանքերում, այլև աշխարհիկ կյանքում:

Այն հանգամանքը, որ բանաստեղծը հաշվի է առնում ոչ միայն (և ոչ այնքան) «...գիտնոց, այլ տխմարաց (հմա՝ անուսումներին) և տղայոց» («Ողբ Եդեսիոյ», տող 1035), նրան ստիպում է գնալ դեպի մատչելիությունը, սակայն, առանց դավաճանելու գեղեցկին, առանց պարզունակ դառնալու: Նա բերում է նոր ժանրեր: Նա գրում է հարյուրավոր հանելուկներ՝ այլաբանորեն խմբավորելով ոչ միայն աստվածաշնչյան անունները ու գաղափարները, այլև իրեն շրջապատող առարկայական աշխարհը, պատմական անունները, աշխատանքը, գիրն ու մատյանը, հարափոփոխ կյանքն ու մարդուն. ստեղծում է տերունական-եկեղեցական թեմաներով շարականներ, գանձեր, տաղեր ու մեղեդիներ, բայց ավելի քան իր նախորդները, հոգևոր երգերի համար նյութ է քաղում և հայոց պատմությունից՝ հնչեցնելով Վարդանանց, Ղևոնդյանց, Հռիփսիմյանց և այլ նվիրական անուններ. հոգևոր թեմայով հորինում է չափածո ներբողյան, բայց և գրում է ուսուցական բանաստեղծություններ՝ ուսումնասեր մանուկների համար, Մխիթար Հերացի բժշկապետի ու աստղագետի խնդրանքով՝ «Յաղագս երկնից եւ զարդուց նորա» տիեզերագիտական երկը. առաջ է բերում երկարաշունչ քերթ-

[1] Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, *Երևան*, *1961*, *էջ 147*:

վածներ՝ աստվածաշնչյան թեմաներով («Յիսուս Որդի», «Բան Հաւատոյ»), սակայն ավելի մեծ եռանդով ու ոգևորությամբ ստեղծում է «Վիպասանութիւն»-ը՝ գրական իր երախայրիքը (1121 թ.), Հայոց պատմության ու Պահլավունի տոհմի անցյալի բանաստեղծական այդ վերապատումը, և, վերջապես, «Ողբ Եդեսիոյ»-ն՝ իր տաղանդի ամենափայլուն արտահայտությունը և առհասարակ հայ միջնադարյան պոեզիայի լավագույն երկերից մեկը: Ու որքան էլ Շնորհալու ստեղծագործության մի զգալի մասում բնականաբար տիրապետող են եկեղեցականությունն ու կրոնասիրությունը՝ իբրև տուրք իր ժամանակի մտայնությանը, նրա բանաստեղծությունը, համակված է և լույսով, պայծառությամբ ու աշխարհասիրությամբ՝ դարձյալ իբրև արդյունք իր ժամանակի մարդու աշխարհայեցության մեջ կատարված փոփոխությունների: Նրա քնարական հերոսը ներքին տառապանք է ապրում («Աշխարհ ամենայն», «Առաւօտ լուսոյ» և այլն), բայց դրանից նա չի այրվում ու ապառվում, նրա տանջանքն ու հուսահատությունը մռայլ տեսք չեն ընդունում, մնում են լուսավոր:

Շնորհալու բանաստեղծական իդեալը մարմնատանջ և աշխարհամերժ էակը չէ. ի վերջո նա մարդու մեջ հավասարապես բարձրացնում է երկու կողմն էլ՝ և՛ հոգեկանը, և՛ մարմնականը.

Մարմնով առողջ և հոգեկան[2],—

գրում է նա Կոստանդնուպոլսում ռազմական կրթություն ստացող իր եղբորորդի Ապիրատին ուղղած նամակ-բանաստեղծության մեջ և ցանկանում, որ նա լինի

Զիավարժից ներհմտական,
Ի տէգ, նիզակ շարժողական
Որպէս ծղօտ մի եղեգան...
Արիութեանց պարտական,
Նախնեաց քաջացն գոլ նման[3]:

Եվ գիտակից, հոգով հարուստ, հայրենասեր ու քաջ մարդու շնորհալիական երազանքը գնահատելի ու արժեքավոր կդառնա,

---

[2] Ներսիսի Շնորհալւոյ *Բանք չափու, Վենետիկ, 1830, էջ 325:*

[3] *Նույն տեղում, էջ 325—326:*

եթե բանաստեղծին համեմատության մեջ դնենք, օրինակ, նրան ժամանակակից Գրիգոր Մարաշեցու հետ: Շնորհալու հերոսը կյանքում անելիքներ ունի, սրբազան պարտականություններ, մինչդեռ Մարաշեցու համար՝

—Եւ արդ զի՞նչ իցէ մարդ.—Ոչինչ:
—Զի՞նչ իցէ մարդ.—Որդն:
—Զի՞նչ իցէ մարդ.—Ստուերք...
—Զի՞նչ իցէ մարդ.—Երազ անկայուն[4]:

Չնայած իր մտածողության դասային սահմանափակությանը, Շնորհալին, հիարկե ոչ առանց ավետարանի ազդեցության, արտահայտում է ցանկություններ, որոնք հաճելի լինել չէին կարող՝ ունեզրկողին:

Տո՛ւր ինձ փախչել յանիրաւին
Եւ շատանալ բաւականին[5],—

ասում է նա և, «Ողբերգութիւն վիպասանական» քերթվածում (1152 թ.) անդրադառնալով միջնադարի բանաստեղծության այնքան բնութագրական վերջին ահեղ դատաստանի թեմային, պատիժ ու պատուհաս է գուշակում զրկողների, վաճառականների, օրինազանց դատավորների, նենգ արհեստավորների, գողերի ու փչացածների համար.

Անդ թագաւորք ոչ երևին,
Եւ ոչ իշխանք պատուեսցին,
Ոչ մեծամիտք հպարտասցին,
Եւ ոչ հզօրքն բարձրասցին,
Զի միայնակ միայն լինին,
Առանց զօրաց, զոր այժմ ունին...
Քաղցեալք կենաց հացիւ լցցին,
Եւ մեծատունք ունայնասցին...

---

4 *Տե՛ս* Ղ. Ալիշան, *Շնորհալի և պարագայ յուր, Վենետիկ, 1873, էջ 218:*

5 Ներսիսի Շնորհալւոյ *Բանք չափաւ, էջ 142* (շատանալ բաւականին— ջավարարվել բավականով):

Անդ զրկողաց կշիռք դնին,
Որչափ զրկեացն՝ պահանջին...[6]

Շնորհալի—բանաստեղծն ազատ է ներքին անլուծելի հակասություններից, ահա թե ինչու նա կարողանում է «սանձահարել» իր զգացմունքները, դրանք «խաղաղ հունի» մեջ դնել: Նրա մոտ պատկերը, զգացմունքի պոռթկումը միշտ ենթարկվում են ռիթմի ու ոտանավորի կարգավորիչ ուժին: Առհասարակ Շնորհալու բանաստեղծական վաստակն աչքի է ընկնում ձևի արտակարգ մշակվածությամբ, ռիթմի հրաշալի զգացողությամբ: Նա հորինեց և անհանգ ազատ ոտանավորով, բայց, մանավանդ, զարգացրեց վանկա-շեշտային ոտանավորը՝ բազմազան չափերով ու հանգավորումով: Այս վերջին բնագավառում Շնորհալին հայ միջնադարյան ողջ պոեզիայում մնում է անմրցակից: Ռիթմը նրա ստեղծագործության մեջ մեծ նշանակություն է ձեռք բերում կրկնակի պահանջով՝ խոսքի և երաժշտության. ամեն մի բանաստեղծական երկի չափի միաժամանակ հանդես է գալիս որպես արտասանական և երգային սկիզբ, և դա շնորհիվ այն բանի, որ Շնորհալին և՛ բանաստեղծ է, և՛ երաժիշտ: Այդ իմաստով նրա գեղագիտությունը, ամենից առաջ, ռիթմի գեղագիտություն է: Նա կարողանում է հորինել ծավալուն գործեր նույն չափով ու նույն հանգով («Շարադրություն հոմերական վիպասանութեամբ», «Ողբերգութիւն վիպասանական» և այլն), որովհետև այն ժամանակ միահանգ գրելը դիտվում էր իբրև մեծ վարպետություն, բայց որպես բարձր ճաշակի տեր ստեղծագործող՝ զգում է, որ միահանգությունը ձանձրույթ է պատճառում, և իր ծավալուն քերթվածներում, ճիշտ է՝ մեծ հատվածներից հետո, մի հանգից անցնում է մյուսին («Ողբ Եդեսիոյ», «Բան հավատոյ» և այլն): Նրա չափերը միջնադարի մեր բանաստեղծության մեջ շարունակ կիրառվում են, հետագա տաղերգուների երգերում, անգամ չափածո հիշատակարաններում, մշտապես զգացվում են նրա ռիթմն ու ինտոնացիան:

Շնորհալին ասպետական հարգանք ունի բանաստեղծության

---

[6] *Նույն տեղում:*

ձևի նկատմամբ, այդ սերը նրա մոտ մերթ-մերթ հասնում է, նույնիսկ, ձևապաշտության, բայց ոչ ձևամոլության, որովհետև ձևի պայմանականություններին մինչև նրանց վերջին մանրամասները հետամուտ «Շնորհաց տեր Ներսեսը» հավատարիմ է մնում իր ասելիքին, իր սրտին ու գաղափարին: Ահա Հռիփսիմեին նվիրված նրա երգերից մի տուն, հորինված անապեստյան պարզ ոտքերով, որը հանգիտության (բաղաձայնույթի) գեղեցիկ օրինակ է.

Սիրասնունդ սիրամարգ սխրալի,
Ներքափայլ ոսկէթել տարփալի,
Ծռապսակ խոլագլուխ ցանկալի,
Հրեշտա՛կ հրաշագեղ, Հռիփսիմէ[7]:

Կամ մի ուրիշ հատված Վարդանանց հիշատակին գրված շարականից, որի տներից յուրաքանչյուրը նվիրված է մի նահատակի, ընդ որում տների սկզբնատառերը կազմում են «Ներսեսի երգ» ծայրակապը (ակրոստիք), իսկ տներից ամեն մեկում մի առանձին նահատակի անվան սկզբնատառով սկսվող բառերի կուտակումներով Շնորհալին ոչ միայն հանգիտություն է ստեղծում, այլև, կարծես, բանաստեղծական տունը սրբագործում է, այն դարձնում նկարեն.

Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաքինեաց,
Վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու,
Վարդան քաջ նահատակ, որ վանեցեր զթշնամին,
Վարդագոյն արեամբդ քով պսակեցեր զեկեղեցի:

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին,
Խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս,
Խորէն խորհրդական և ծանուցեալ անուն բարի,
Խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան պսակեցաւ[8]:

Ձևի մեծ վարպետ Ներսես Շնորհալին շատ բան արեց հայ միջնադարյան բանաստեղծության ռիթմը հարստացնելու և բազմազան դարձնելու ուղղությամբ: Նրա որոշ նորամուծությունները

---

[7] Ներսիսի Շնորհալւոյ *Բանք չափաւ*, էջ 475:

[8] *Տե՛ս* «Շարական հոգևոր երգոց», *Կ. Պոլիս*, 1853, էջ 641:

հետագայում մասամբ տեղի տվեցին, չքնեցին ժամանակի քննությունը, բայց մեծագույն մասով պահպանեցին իրենց կենսունակությունը, դարոց հանդիսացան ոչ միայն միջնադարի, այլև նոր ժամանակների հայ բանաստեղծների համար: Այդ առումով հայոց տաղերգությանը նա նույն ծառայությունը մատուցեց, ինչ մեր նորագույն պոեզիային՝ Տերյանը, Մեծարենցը, Չարենցը և մյուսները միասին: Եվ հայ մշակույթի անձնվեր բարեկամն ու թարգմանը՝ Վալերի Բրյուսովը, իրավունք ուներ ասելու, թե Շնորհալու բոլոր գործերն էլ «համակված են ճշմարիտ ոգևորությամբ... գրված են բացառիկ վարպետությամբ, որը երևան է բերում նաև իր արվեստի տեխնիկայով բոցավառված մեծ արվեստագետի»[9]:

Ներսես Շնորհալին հայրենական Ծովք ամրոցում էր, երբ 1144 թ. դեկտեմբերի 23-ին (հին տոմարով), մեկ ամսվա պաշարումից հետո, Մոսուլ քաղաքի ամիրա Իմադեդդին Զանգին գրավեց Միջագետքի Եդեսիա (Ուրհա) քաղաքը: Եդեսիան, ասորական, հունական և հայկական մշակույթների այդ օրրանը, Խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ (1099 թ.) անցել էր ֆրանկների ձեռքը և դարձել Եդեսիայի կոմսության կենտրոն: Այն ուներ տարակազմ բնակչություն, ասորիների հետ քաղաքում մեծ թիվ էին կազմում և հայերը: Շնորհալու Շահան (Զորավար) եղբոր որդին՝ Ապիրատը, Եդեսիայի պաշարման ու գրավման ժամանակ գտնվելիս էր եղել այնտեղ: Երբ քաղաքը ընկնում է թշնամուց, ռազմական գործողություններին ականատես ու մասնակից երիտասարդ զինվորական Ապիրատը, անցնելով Ծովք, եղելությանն իրազեկ է դարձնում իր բանաստեղծ-հորեղբորը և խնդրում նրանից գրել Եդեսիայի առման մասին: Ահա այդ առիթով էլ Շնորհալին ստեղծում է «Ողբ Եդեսիոյ»-ն՝ բավարարելով ոչ միայն իր եղբորորդու ցանկությունը, այլև առհասարակ բանաստեղծորեն ոգևորելով ու արթնացնելով հայ ժողովրդի հայրենասիրական զգացմունքները:

Եդեսիան դառնում է ազդակ, որպեսզի քաղաքացիական և գրական իր հասունությունն ապրող բանաստեղծը[10], անդրադառ-

---

[9] Վալերի Բրյուսով, *Հայաստանի և Հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967, էջ 78—79:*

[10] *Ներսես Շնորհալին ողբը գրելիս 44—45 տարեկան էր:*

նալով իր ժամանակի պատմական անցքին, արտահայտի իր խոհերը հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի մասին, շոշափի համայն հայության գոյության խնդիրը: Այդպիսով Ողբն ստացել է պատմական ու հայրենասիրական լայն բովանդակություն, դարձել է ծրագրային ստեղծագործություն և, որպես շնորհալիական տաղանդի հզոր պոռթկում, հայոց միջնադարի ողջ ընթացքում իր բազմաթիվ հատվածներով հնչել է իբրև հայրենիքի հիմն: Դա հայրենազուրկ հայի համար եղել է կորսված հողի երազի ու ափսոսանքի երգ, միաժամանակ նրա մեջ շարունակ բորբոքել է ապագայի հավատ ու կենսասիրություն:

Իր ժանրային նկարագրով Ողբը նորություն էր հայ բանաստեղծության մեջ: Նախորդ շրջանի մատենագրությունից նրան բավական հոգեհարազատ են քերթողահայր Մովսես Խորենացու Հայոց պատմության ամփոփիչ գլուխը՝ «Ողբքը», իր հայրենասիրական կրքով ու քաղաքացիական զգաստությամբ, և Դավթակ Քերթողի (VII դար) «Ողբք ի մահն Ջևանշերի մեծի իշխանին» գործը՝ նարտասանական արտահայտչամիջոցների և ժողովրդական մտածողության տարրերի (հիշենք անեծքի հատվածը) հրաշալի միաձուլումով: Շնորհալին, որպեսզի պատումը հուզիչ ու հետաքրքիր դարձնի, դիմել է բարառնության եղանակին, այսինքն՝ այլաբանության, հավանաբար զարկ ստանալով Երեմիայի Ողբի սկզբից. «Զիա՞րդ զատաւ, նստաւ միայնացեալ քաղաքն բազմամարդ և եղև իբրև կին մի այրի, լցեալ տրտմութեամբ ի մէջ հեթանոսաց»[11]: Անձնավորելով Եդեսիա քաղաքը որպես որբ և այրի կին՝ Շնորհալին անցքի մասին պատմում է նրա բերանով, և երկն իր ամբողջության մեջ ստացվել է ոչ թե կողմնակի մարդու չոր ու ցամաք նկարագրություն, այլ ցնցող մի պատմություն, ուր ամեն մի դրվագի ներհյուսված են որդեկորույս մոր վիշտն ու տառապանքը: Այդպիսով դիմառնությունը դառնում է միջոց, որով բանաստեղծն ընդհանուր, «քրիստոնեական» աղետը ներկայացնում է որպես անձնական ողբերգություն, և պատահական չէ, որ Ողբում գերիշխողը քնարական տարրն է:

---

[11] *Ողբք Երեմիայ, Ա. 1:*

Ծնորհալու պատկերային մտածողության ակունքը ոչ միայն Աստվածաշունչն է, այլև կենդանի բնությունը, այլև հայոց պատմագրությունը և, ամենից առաջ, Խորենացին ու Եղիշեն: Հին Կտակարանի էպիկական հերոսները, սաղմոսներից առնված առանձին դարձվածքները ու համեմատությունները, Վարդանի ճառի ոգեշունչ տողերը, առակատիպ խրատները զարմանալի բնականությամբ գալիս մտնում են Ողբի ընդհանուր հյուսվածքի մեջ և ստեղծում բանաստեղծական այնպիսի ոճ, որը մերթ հերոսական է, մերթ՝ ողբերգական, մերթ հռետորական է ու վսեմ, մերթ՝ մեղմ ու անմիջական:

Ծնորհալու Ողբն ունի այուժեի զարգացման յուրահատուկ ընթացք ու կոմպոզիցիա: Սկզբում Եդեսիան դիմում է ազգերին ու ցեղերին, քրիստոնեության տարածման նշանավոր կենտրոններ Երուսաղեմին, Հռոմին, Կոստանդնուպոլսին, Ալեքսանդրիային ու Անտիոքին և հրավիրում ողբակից դառնալ իրեն, որովհետև՝

Բայց աղէտս իմ ցաւելի
ո՛չ փոքրագոյն դեղով բուժի
Եւ ո՛չ միով տեղեաւ փակի
կամ մասնաւոր մարդկամբ սփոփի:
Այլ կարեկից այսր աղէտի
պարտ է կոչել աղերսալի
Չորեքծագեան կողմ աշխարհի,
ուր են հանուր մարդկան որդի...
(տող 174—177)

Ապա իր խոսքն ուղղում է երբեմնի հայոց ոստան Վաղարշապատին և շուրջ հարյուր տարի առաջ Բագրատունյաց մայրաքաղաքի իր պատվից զրկված Անիին՝ սրանց մեջ տեսնելով իր բախտակիցներին: Գեղեցիկ են առանձնապես այն տողերը, որոնցում երգվում է Անիի կորսված փառքը: Մեր բանաստեղծության մտաւն, փառորեն առաջին անգամ, թևածում է հայրենի եզերքի վրայով.

Քանզի և դու երբեմն էիր
վայելչական հարսն ի քօղի,

Մերձաւորաց յոյժ ցանկալի,
հեռաւորաց փափագելի...
Քանզի անցին ըստ երազի,
որպես ծաղիկ ամարայնի,
Զյորդութիւն յորդ վտակի
գարնանաբեր հեղեղատի,
Կամ զուռուցեալ պղպջակի,
որ ընդ լինելն պատառի...
*(տող 132—133, 152—154)*

Այս նախերգանքից հետո բանաստեղծն անցնում է բուն նյութին՝ Եղեսիայի գրավման ընդարձակ նկարագրությանը, որը կատարված է հանկարծության եղանակով. պատկերվում է քաղաքի խաղաղ ու բարգավաճ անցյալը, որին գալիս փոխարինում են սուրը, կողոպուտը, ավերածությունը, գերեվարությունն ու սարկությունը: Ռազմի տեսարաններ պատկերելիս Շնորհալին հետևել է հայ դասական պատմագրության ավանդներին՝ հասնելով զարմանալի արտահայտչականության. մարտական գործողությունների նկարագրությունները ողբում դինամիկ են ու տագնապալից: Բնանկարը, որ ինչպես հայ նախորդ բանաստեղծների ստեղծագործություններում, այնպես էլ Շնորհալու հոգևոր երգերում գլխավորապես այլաբանական իմաստ ունի, այստեղ հեռու է ալեգորիա լինելուց. դա բնության «անմիջական» անդրադարձումն է և երբեք չի ենթարկվում քրիստոնեական դոգմատիկայի պայմանականություններին: Դա արևի ու լույսի, հողի ու ջրի, ծառ ու կանաչի գեղեցկությամբ արբած մարդու հրճվանքի արտահայտությունն է:

Ջուր կենդանի յինէն բղխէր,
զուարթածաղիկ բոյս յօրինէր,
Գետոց նման վտակ հոսէր,
զբուրաստանս արբուցանէր:
Ծովն ի միջի իմ ծածանէր,
քաղցրիկ օդովն ծիծաղէր...
Առաւօտուն ցօղն իջանէր,
ոսկենման ճաճանչ փայլէր...
*(տող 213—215, 221)*

Կյանքն այդքան սիրող, իր բնաշխարհին այդօրինակ նվիրումով կապված Շնորհալու քնարական հերոսը ահա թե ինչու անեծքի ու վրեժի խոսք է ուղղում Եդեսիան նվաճողին: Ավետարանական համակերպման ու խոնարհ հնազանդության քարոզին չի հետևում նա. ժողովրդական նրա բանադրանքը ծնվում է փոխհատուցման արդար պահանջից.

A II/51248

Սրով արևդ պակասեալ՝
լիցիս տանեաց խոտ ցամաքեալ...
Որդիք ձեր՝ որք, կանայք՝ գերեալ,
լիցին մուրողք և աստանդեալ...
Սևս ամպ, մթին, կարկտաբեր,
զքեզ արասցէ անպտղաբեր...
Հարցէ զարևդ ի սուր սուսեր,
իբր յանխնայ զիս դու հարեր...
Տուն քո լիցի անհետ, յաւեր,
և դու՝ գերի, ազգով յերեր.
Տոհմ և ազինքդ քո թուրքեր
հալածեսցին յերկրի յեզեր...[12]

*(տող 800, 803, 813, 824, 841—842)*

Ողբի հաջորդ հատվածը («Բայց դուք, որդիք իմ սիրելիք, չէք ինձ մեռեալ, այլ կենդանիք» տողից սկսած) հնչում է որպես զոհվածների հիշատակին նվիրված ռեքվիեմ, որին հետևում են

---

[12] *Ինչպես վերևում բերված, այնպես էլ ուրիշ տողեր (տող 855՝ «և կերիցէ զմիս քո սուսեր», տող 857՝ «յորում ունիս փոքր ինչ օրեր», այսինքն՝ դեռ շարունակելու ես ապրել) վկայում են, որ Շնորհալին իր երկը գրել է այն ժամանակ, երբ դեռ Զանգի ամիրան կենդանի է եղել: Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս ճշտելու Ողբի հորինման տարեթիվը: Այն չի կարող գրված լինել 1146 թվականին, քանի որ, ըստ ժամանակի տարեգիրների անվիճելի տեղեկության, Զանգին Եդեսիան գրավելուց, այն է՝ 1144 թ. դեկտեմբերի 23-ից, մեկ տարի հետո արդեն սպանված է եղել (տե՛ս* Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 374.* Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 418—419): Ուրեմն մնում է եզրակացնել, որ Ողբը գրվել է 1145 թվականին, ավելի ճիշտ՝ այդ թվականի սկզբներին:*

«Փրանկաց ազգի» գալստյան, այսինքն՝ խաչակրաց նոր արշավանքի, սպասումով տոգորված տողերը՝ իբրև տուրք ժամանակի մտայնությանը,—այս և բանաստեղծի հիշատակարանը: Խաչակրաց երկրորդ արշավանքը (1147—1149 թթ.), ինչպես հայտնի է, ո՛չ Եդեսիան ազատագրեց և ո՛չ էլ Արևելքի քրիստոնեությանը որոշակի օժանդակություն բերեց, և պատահական չէ, որ քիչ անց, 1151 թ., «Բան հաւատոյ» քերթվածի հիշատակարանում Շնորհալին արտահայտելու էր իր ճշմարիտ խոստովանությունը.

Ի բարկութեան ժամանակի,
Յորում նեղիմք յանօրինաց,
Եւ ոչ նուազ ի դրժանաց
Ի սուտանուն քրիստոնէից:[13]

«Ողբ Եդեսիոյ»-ն բացառիկ ազդեցություն է թողել միջնադարի հայ բանաստեղծության վրա: Շնորհալին ունեցավ բազմաթիվ հետևորդներ՝ Գրիգոր Տղա, Ստեփանոս Օրբելյան, Գրիգոր Խլաթեցի, Առաքել Բաղիշեցի, Սիմեոն Ապարանցի, Հակոբ և Ստեփանոս Թոխաթցիներ և ուրիշներ, որոնք նրա երկի ակնհայտ նմանությամբ և հետևողությամբ են հորինել իրենց պատմական ողբերը:

Ութ հարյուր տարի է անցել Ներսես Շնորհալու մահվանից: Սակայն նրա ստեղծագործությունը լավագույն մասով պահպանել է իր գեղարվեստական ու գրա-պատմական նշանակությունը. Նրա երգն ու բանաստեղծությունը շարունակում են հուզել և մեր մշակույթի պատմության մեջ տեղ ապահովել նրան միջնադարի մեծերի՝ Գրիգոր Նարեկացու, Ֆրիկի, Կոստանդին Երզնկացու և մյուսների կողքին՝ որպես հայ ժողովրդի ազգային ձգտումների և հոգևոր գեղեցկությունների արտահայտչի:

**ՊՈՂՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Բանասիրական գիտությունների թեկնածու

*15. 7. 1973*

---

[13] Ներսիսի Շնորհալւոյ *Բանք չափաւ, էջ 242:*

# ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ

ԲՆԱԳԻՐ

*ԲԱՆ ԲԱՐԱՌՆԱԿԱՆ,*
*ՏԱՂԻՒ ՉԱՓԵԱԼ ՀՈՄԵՐԱԿԱՆ,*
*ԽՕՍԵԱԼ ԲԱՆԻՒ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ,*
*ՎԱՍՆ ԵԴԵՍԻԱՅ ՄԵԾԻ ԱՌՄԱՆ*
*Ի ԹՈՒԱԿԱՆԻ ՀԻՆԳՀԱՐԻՒՐԻ*
*ԵՒ ԻՆՆՍՈՒՆ ԸՆԴ ԵՐԵՔԻ,*
*ՔՍԱՆ ԵՒ ԵՐԵՔ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ*,*
*ԵՐՐՈՐԴ ԺԱՄՈՒ, ՅՕՐ ՇԱԲԱԹԻ։*

1 $B_1F_{12}H$ *կփ բան տացեալ* ($B_1$ նախապես *բան առական*, ապա կրկնում է խորագիրը սև թանաքով և գրում *բան տացեալ*) C *բան է ոգեալ* D *բան առական*

2 $AB_{23}DEF_2fK$ *թ խօսել* $B_1F_1J$ *յեդեսիայ* CL *կ Եդեսիոյ* g *Ուռհայոյ* $F_2$ *Եդեսեայ* H *Եդեսիայի* g *մեծին*

3 $B_1F_2gHK$ *կփ թուականիս* $B_2L$ *թուականին* $B_2$ *հինկհարիւր* C*ի հինգհարիւր թվականի* փխ *ի թուականի հինգհարիւրի* C *ինսուն* $B_1$'*ւ ութերեկի* փխ *ընդ երեքի* C *և* փխ *ընդ* D *փ ութերեկի* ($EF_{12}H$ *ութերրեկի*, *կ ութն երրորդի*) փխ *ընդ երեքի* $AB_{23}$ *երրա-կի* (K *երրեկի* g *երրեակի*) փխ *երեքի*

4 *կ ի քսան և երեք* $B_1F_{12}K$'*ւ* փխ *և* CEHL չիք *և* $F_2JK$ *յերրորդ* $F_2JK$ *օր* g *աւուր* $B_1g$ *շաբաթու*

*$F_{12}f$ 4-րդ տողից հետո ունի *Նորին տեառն Ներսէսի* (f *Կլայեցւոյ*) *հայոց կաթուղիկոսի տացեալ վասն առմանն Եդեսիայ քաղաքի* g 4-րդ տողից հետո ունի *Օգնեա՛, Սուրբ Հոգի, ամէն։*

1

*Ողբացէ՛ք, եկեղեցիք,*
*հարսունք վերին առագաստի,*
*Քորք և եղբարք իմ սիրելիք,*
*որք յընդհանուր կողմ աշխարհի.*
*Քաղաք և գեւղք առհասարակ,*
*ազգ և ազինք, որ էք յերկրի,*
*Հաւատացեալք Քրիստոսի,*
*երկրպագուք Նորին խաչի*[*]*:*
*Նախ առաջին ձեզ բարբառիմ՝*
*արփիափայլ և հրաշալի,*

---

1 CfJL կփ արդ ողբացէք փխ ողբացէք H գտերք փխ հարսունք H վերինն $B_2$ առագաստին H Սիոնի փխ առագաստի

2 $AB_2$EfK քոյրք $F_2$ հայրք (H հարք) փխ քորք D չիք և $F_2$ եղբայրք $F_1$H և փխ իմ $B_1$CD սիրելի $B_3$ յընթանուր $F_{12}$JK ընդհանուր L ի կողմն

3 $B_{13}$D$F_1$H թ քաղաքք A$EF_{12}$ գեղք $B_{1-3}$Dg գեօղք Cf գեօղ HL կփ գիւղ J թ գիւղք $B_3F_{12}$fH փ ազգք f չիք որ էք կ որք

4 K հաւատացեալ էք փխ հաւատացեալք $EF_{12}$ 'ւ երկրպագուք թ ի երկրպագուք

5 $EF_{12}$K 'ւ առաջին $B_2$g բարբառի

---

[*] 4 տողից հետո Մատենադարանի № 9736 ձեռագիրն ունի՝
*Ոսողմնողք անհասարակ,*
*Նորոգ ծաղկանց նոր Սիոնի:*

Ձորեքկերպիցն նմանեալ
  յերկրի աթոռք երկնաւորի,
Որ էք բղխումն աստուածային
  ի յաղբերէն Ադենայի՝,
Յորս առ ի ձէնջ քառավտակ,
  յորդահոսան գետք հոլովին՝
Արբուցանել զտիեզերս
  աւետաբեր բղխմամբ բանի.
Առ որս խօսիմ աղերսալի,
  դուք լսեցէք լալոյս ձայնի։

2

Երուսաղէ՛մ քաղաք մեծի
  թագաւորին երկնաւորի,
Ուստի Օրէնք և Մարգարէք
  աղբերաբար բղխեալ յերկրի,
Յորմէ Որդին Հօր միածին
  լոյս ծագեցաւ անճառելի

---

6 $B_2$g նմանեալք Cf նմանի $B_2$Dg երկնաւորին $F_2$K յերկնաւորի

7 $B_1$fK երեք փխ որ էք g ուր փխ որ $B_1$ բխումն C բղխում A յաղբիւրէն $B_1$DJL ի յԱդէնի $B_3$ յԱդենայի $B_2F_{12}$K յԱդենային թ Ադինայի H յԱդինայի կ յայն յԱդենի փխ Ադենայի

8 $B_1$D զորս փխ յորս H սպս կ որք փխ յորս CfH ձեզ փխ ձէնջ H մէնջ A քառավտակք Cf քառորդ վտակ փխ քառավտակ Cf փ գետ $AB_{13}$GDfJL հոլովի g յոլովին H զտիեզերս փխ գետք հոլովին, այս տողից հետո L ունի՝ Ողոգանոցք առձաստրակ

9-ից 34 տողերը D չունի H չունի այս տողը $B_1$L աւետաւոր փխ աւետաբեր $AB_2DF_{12}$gJ թ բղխման E բխման HK բղխման g փ բանին

10 $B_1$ որ փխ որս $B_1$ խօսիմս E աղերսալի փխ աղերսալի կ լուարուք փխ լսեցէք լալոյս EHK լալուս

11 $F_{12}$K Յերուսաղէմ $B_1$ Թագաւորի

12 $AB_{23}DEF_{12}$fK օրէնքն $AB_{23}$fg աղբիւրարար $EF_{12}$H աղերսարար

13 A թ անճառելին

Եւ ինձ գրեաց երանութիւն
յառաջագոյն, քան զամենի.
Քանզի նախկի հաւատացի,
զՈրդի ընդ Հօր դաւանեցի,
Որով թէ ոչ յանդգնէի,
զիս վեհագոյն քեզ ասէի։
Ի քեզ սպանին զՏէրն ի փայտի,
ես ի հեռուստ երկրպագի.
Թէպէտ և այժմ ի մի հոգի
երկրպագեմք նորին խաչի։
Բայց դու լսեա, ո՛վ սիրելի*,
տարագրելոյս աղաղակի,
Լե՛ր մխիթար ցաւակցելի
և ցո՛յց ինձ դեղ բեկեալ սրտի։

---

14 H յառաջագուն $AB_{1-3}CDEF_{12}fgHJ$ թԿ ամէնի K յամենի փխ զամէնի

15 CiL թԿ նախկին $AB_{1-3}CDF_{1}fgJ$ թԿփ որդի $AB_{23}Dg$ քարոզեցի փխ զաւանեցի

16 L որովք H վեհագուն

17 $B_1$ զքեզ $EF_{12}K$ սպաննին L տէրն $F_{12}HK$ թ խաչին փխ փայտի նաև երկիրպագի ($AB_{23}CDF_{12}fgL$ փ) այսուհետև երկրպագի և այլ ընթերցվածները չենք նշում

18 $B_1EF_{12}HK$ թ եմ ի հոգի փխ ի մի հոգի $EF_{12}KLH$ թ երկրպագեմ

19 $AB_{1-3}DJ$ չիք դու $B_2Eg$ լուէ $F_{12}HK$ թփ լուր և դու J և լսեա L են լուր

20 $B_1$ ցաւագցելի Ci չիք եւ A բեկեա E սրտիս. այս տողից հետո L ունի՝

Զի քո հմուտ զօրով սրտի
բառ որբալոյն Մարգարէի,
Բանդի յանցեալ ժամանակի
արրեր և դու զատն ըմպելի

---

* № 8392 ձեռագիրն ունի հետևյալ դասավորությունը՝
Եւ ցոյց ինձ դեղ բեկեալ սրտի,
լեր մխիթար ցաւակցելի
Բայց լսեա, ո՛վ սիրելի
տարագրելոյս աղաղակի։

Եւ դու, Հռո՛մ, մայր քաղաքաց,
գերապայծառ և պատուելի,
Մեծին աթոռ Պետրոսի[2]
առաքելոց գլխաւորի.
Եկեղեցիդ անշարժելի,
ի Կեփայեան շինեալ վիմի[3],
Դրաց դժոխոց անյաղթելի
և կնիք երկնիցն բացողի,
Որթ վայելուչ բազմատեղեան
և Հաստարմատ տունկ Պօղոսի[4],
Առոգելով արեամբ նորին,
որպէս դրախտան, որ յԱդենի,
Մասին Հասեալ Ղուկայի[5],
աստուածային մատենագրի,
Ահա առ քեզ բանս խօսիմ,
վիճակ 'ւ աթոռս Թադէի[6]:
Լո՛ւր ի Հեռուստ իմոյս ձայնի,
լե՛ր ողբակից ինձ յայս վայրի,

---

21 նաև Հռոմ, (AB$_{1-3}$DE Թկ) այսուհետեւ չենք նշում. B$_2$EF$_{12}$ մայրաքաղաք փխ մայր քաղաքաց
22 ADEF$_{12}$HJK մեծի
23 EF$_{12}$H Թ եկեղեցիդ ջ եկեղեցիք փխ եկեղեցիդ B$_1$ կափայան փխ կեփայեան AB$_{23}$CDF$_1$fgHI. Թկփ կեփաեան
24 CEF$_{12}$fHJK Թկփ դրանց և դրունք կ գկնիք B$_1$ կնիկք B$_2$ կնիքս F$_2$ յերկնիցն
25 C վաեյող փխ վայելուչ A փ բազմատեղի F$_2$ Հաստարմատ փխ Հաստարմատ
26 B$_1$J կ առոգելով և առոգեցեալ կ նորայն A Թ դրախտ F$_1$fJL կփ դրախտն H դրախտի B$_1$f յԱդենին և յեդեմի կ Ադենական փխ յԱդենի
27 A Ղուկանին Cf Ղուկային
28 f բանց փխ բանս B$_2$fg խօսի F$_2$HK չիք 'ւ B$_{12}$EF$_{12}$gHK Թկ աթոռ EF$_{12}$HK Թ Մատթէի փխ Թադէի:
29 E յեր փխ լեր EF$_{12}$H իմ այս փխ ինձ յայս L յայսմ փխ յայս

Լա՛ց ընդ լացողս, որպէս ասի
    ըստ գրեցելումն առ քեզ բանի։
Ձե՛ռն մատո վաղվաղակի
    ինձ՝ կապելոյս ի տան բանտի,
Ա՛ռ զվրէժս աններելի
    ի թշնամւոյն զիս գերողի։
Աւ քեզ են բանք իմ փարելի,
    ո՛վ դու քաղաք յոյժ պանծալի,
Զոր Կոստանդեայ թագաւորի՝
    շինեալ ի սկիզբն Ասիայի։
Երկրորդ եղեալ Երուսաղէմ
    և Նոր Հռոմ զարմանալի,
Սիրեցելոյն աշակերտի
    աթոռ գոլով փոխադրելի։
Ժողովարան սուրբ վկայից,
    տուն և տեղի մաքրագունի,
Գահոյք հզօր մեծ արքայի,
    յերկրի նման երկնաւորի։

---

30 Թ լալ փխ լաց $EF_{12}HKL$ ընդ $B_1$ որպէս ասի Կ որպէս լսի փխ առ քեզ բանի L-ում 30-31 տողերը խախտված են, այսպես՝

Ինձ կապելոյս ի տան բանդի
    ձեռն մատո վազվազակի
Լաց ընդ լացողս, որպէս ասի
    ընդ գրեցելումն առ քեզ բանի։

31 g լեռն փխ ձեռն $AB_{1-3}CDEgHJL$ բանդի

32 $B_1$ ի վրէժս $AB_{1-2}Dg$ զվրէժ A անկապելի փխ աններելի H թշնամեաց $F_{12}H$ ինձ փխ զիս

33 J բանքս A փրկելի (Թ սիրելի) փխ փարելի Կ քաղաքդ $B_1$ պանծելի f պանձալի

34 $B_1$ նոր փխ զոր $F_1$ Կոստանդեայ $EF_{12}HK$ Թ չիք ի Թ յսկիզբն $F_1HL$ յԱսիայի

35 $F_{12}K$ յԵրուսաղէմ

36 $B_3$ սիրեցելոյն

37 $AB_{23}EF_1gHJKL$ Թկփ մաքրագունից $F_2$ մաղրագունից

38 g գահոյք $F_2$ յարքայի $F_2$ յերկնաւորի

Լուր ինձ և դու խոնարհաբար,
ո՛ւնկն մատո լալոյս ձայնի,
Զի սեփական ես քո էի
մայրաքաղաք քում վիճակի։
Ի քէն շինեալ յիս տաճարի՝
անուանակիր քոյդ խորանի,
Հանգոյն վերինն Սիոնի,
անհամեմատ երկրաւորի։
Բայց այժմ թողեր զիս ամայի,
իբրև զբու յաւերակի,
Կամ որպէս մարդ անօգնական
և ի մեռեալս անյիշելի,
Զոր պաղատիմ զարթուցանել
զզօրութիւնդ անխլանելի,
Հատուցանել բազմապատիկ
զվրէժ՝ ի ծոց իմոյ նեղչի։
Ահա զոչեմ առ դրունս քո,
մայրաքաղաքդ Եգիպտոսի,

---

*39* Eg տուր փխ լուր î չիք ինձ $B_1$J և ինձ դու փխ ինձ և դու $AB_{12}C$ խոնարհ բարի g 'ւ ունկն

*40* CJ մարաքաղաք g քոյս

*41* $AB_1$ $_3F_1$ անուանակիր թ՝ անուանակից

*42* $B_1$ հանգոյն նման վերինն $B_3$ հանկոյն D նման վերին փխ հանգոյն վերինն E վերին կ նման վերին յարկի փխ հանգոյն վերինն Սիոնի $AB_{1-3}CDF_{12}$fgK թ՝կփ Սիոնի, այսուհետև պահում ենք Սիոնի ձևը, այլընթերցումները չենք նշում $AB_3EF_{12}$fHKL թ՝ երկնաւոր փխ երկրաւորի

*43* g արդ թ՝ դու $F_{12}$H յամայի g որպէս HJK աւերակի

*44* g իբր փխ որպէս g զմարդ J մար փխ մարդ C ապականել K անյօգնական î անապական փխ անօգնական

*45* $EF_{12}$K զզօրութիւնքդ H զօրութիւնդ

*46* $B_3$Cî իմոյն

*47* H քոյի փխ քո $F_1$ յեգիպտոսի $F_2$ յեգւիպտոսի

Աղեքսանդրիա ցանկալի[8],
անուանակիր քում շինողի,
Որ ես աթոռ դու Մարկոսի՝
մեզ աւետեաց քարոզողի,
Որ և դրախտին աստուածային
տունկ բանաւոր ի քեզ տնկի։
Արմաւենիք ծաղկեալ ի տան,
Հոյլք արդարոց Տեառն ընծայի,
Եւ որպէս մայրք Լիբանանու
են միանձունք քոյդ նահանգի,
Հրեշտակերամք և խաչակիրք
և անմարմնոց նմանք յերկրի։
Հիմն և արմատ ուղղափառաց,
տարամերժող հերձուածողաց
էին զումարք հայրապետաց,
որ առ ի քոյդ նախագահի,

---

48 $AB_{1-3}C$ *Աղէկսանդր* $EF_{12}HK$ *թփ Աղեկսանդրոսդ* DfgJ *Աղէքսանդր կ մեծ Աղեքսանդր*, այսուհետև պահում ենք *Աղեքսանդրիա* ձևը և այլընթերցումները չենք նշում L *թ յոյժ ցանկալի* $B_{13}$ *անուանակիր* C *քո* փխ *քում* g այս տողին հաջորդում է 50 տողը՝
*Որ և դրախտին աստուածային,*
*տունկ բանաւոր ի քեզ տնկի։*

49 $B_1$fJ *որպէս* փխ *որ ես* K *յաթոռ* H *աւետարերաց քում զինողի* փխ *աւետեաց քարոզողի*

50 $F_1$ *աստուածայնոյ* $F_2$ *աստուածայնոյն* $B_2$ այս տողը չունի L *մեզ* փխ *քեզ*

51 g *արմաւենի* H *տանի* փխ *տան*

52 $F_1$ նախապես *միանձունք*, ապա կարմիր թանաքով սրբագրված՝ *միանձունք* $F_2K$ *միանձունք* H *միանձուք* $B_1CDEF_{12}$fHL *թկփ քում* փխ *քոյդ*

53 AL *հրեշտակերամբ* D *կ հրեշտակերամ* $B_1D$ *կ նման*

54 $B_{13}CDEF_{12}HJKL$ *կ աւարտ* փխ *արմատ* J *ուղափառաց* $B_1DEF_{12}HJ$ KL *թկ տարամերժեալ* փխ *տարամերժող*

55 $B_2$g *հին* փխ *էին* $AB_{23}$ *հայրապետացն*

Թէպէտ և չեն այժմ ի միջի,
    այլ լոկ երազ են գիշերի,
Քանզի եղեր և դու այրի,
    կարծեմ նման ինձ ողբալի։
Երբեմն էաք մեք ըղձալի,
    բայց այժմ եղաք յոյժ եղկելի.
Որով հայցեմ, ո՛վ բաղձալի,
    ողբակցելով ինձ յայս վայրի,
Զի հաւասար հանգունակի
    յանօրինաց եղաք գերի։
Արդ, մխիթար այսմ աղէտի
    մեզ երկոցունց այս լինիցի՝
Մաքուր մաղթանս աղերսալի
    մատուցանել Տեառն արարչի,
Զի բարկութիւնն, որ ըստ մեղաց,
    ի քաղցրութիւն փոխարկեսցի,
Ի տեսանել ի մեզ՝ բարի,
    'ւ ի Թշնամիս՝ լինել չարի,

---

56 Լ իրր փխ յով H ի փխ են $B_1$J Ն այս տողին հաջորդում է 58 տողը և 58-ին՝ 57 տողը
58 $F_{12}$ յըղձալի Լ եղաք այժմ փխ այժմ եղաք $B_3$ եղեաք փխ եղաք C մէք փխ յոյժ
59 Փ եւ ողբակից փխ ողբակցելով
60 H անօրինաց $B_3$ եղեար
61 E մղիթար $AB_3$ երկուցունց $B_1$ երկեցունց $B_2$H երկուցունցս $EF_{12}$ fgJK ԿՓ երկոցունցս
62 $EF_{12}$H տատջի փխ արարչի
63 C բարկութիւն H բարկութիւնս H չիր որ H մեղայի փխ մեղայ
64 $F_{12}$H է տեսանել մեզ գրարի փխ ի տեսանել ի մեզ բարի EK Փ մեզ գրարի փխ ի մեզ բարի Լ զմեզ ի փխ ի մեզ A 'ւ զի H ի փխ 'ւ ի A նեղել փխ լինել $EF_{12}$H այս տողին հաջորդում է 66 տողը և ընդհակառակն 66-ին՝ 65 տողը

Թէ աստանօր հաճոյացի
և եթէ անդ հատուցանի*։
Բանիւ դատմամբ ընդ քեզ կացիմ,
ո՛վ Անտիոք քոյր սիրելի՞,
Առաքելոց տուն և տեղի
յԱւետարանն Մատթէի.
Յորում անունն սքանչելի
նախ առաջին ի քեզ դնի,
Որ քրիստոնեայն վերակոչի
երկրպագուացս Քրիստոսի,
Իմ մերձաւոր և անձկալի՝
յուրախութեան ժամանակի։
Ընդէ՞ր չհասեր վաղվաղակի
ինձ ի թիկունս օգնականի,
Այլ թոյլ ետուր վասն խեթի
մատնիլ ի ձեռս անօրինի։
Արդ, լո՛ւր իմոյս դառն ձայնի
և լեր կցորդ այրման սրտի,

---

65 $F_1$ *հաճոյացիս* $B_2$ *թէ* փխ *եթէ* Cf այս տողից հետո ունի՝

*Փափագ ըղձից մեր կատարի,*
*պարգևողէն յամենայնի*

66 $B_1$D *կարգի* $B_2$ *կարի* $F_{12}$H *կարգիմ* g *կարգեմ* փխ *կացիմ* *Թ կացեմ*
67 A$B_{12}$fL *Մաթէի*
68 $B_{12}$DJ *Թ* *անուն* H *և* փխ *նախ* K *՚ւ առաջին*
69 A$B_2$CD$F_2$g *քրիստոնեան* $B_1$ *քրիստայն* H *կ* *քրիստոնեայ* H *վերաբերի* *Կ* *վերաձայնի* փխ *վերակոչի* $F_2$ *երկպագուացս* *Թ* *երկրպագուքս*
70 A$B_3$CDE$F_{12}$fgHJKL *Թ՝Փ* *իմ* փխ *ի* K *ուրախութեան*
71 Cf *չհասնիս* $F_2$ *յօգնականի*
72 $B_1$ *մատնի* $F_{12}$HL *Փ* *մատնել* H *ձեռն* L այս տողից հետո ունի՝

*Իբր զճնճղուկ յորոգայթի,*
*անապաւէն յամենայնի.*

---

* № *8436 Ձեռ.* 65 տողից հետո ունի՝

*Ըստ իւր արդար դատաստանի,*
*իւրաքանչիւր ընդ արժանի։*

Լա՛ց ընդ լալիս յամենայնի,
վասն իմ իշո ջուր վտակի։

3

Արդ, ի Ստորին կողմ աշխարհի
զոր խօսեցաք՝ շատասացի.
Բայց բանս մեր փոփոխեցի,
յելս արևու վերադարձցի
Առ Մեծն Հայք՝ Տուն Թորգոմի[10],
ազգ և ծնունդն Յաբեթի,
Անդ, ուր աթոռ Պարթևականց՝
Թագաւորացն Արշակունի,
Յորում էի ի սահմանի,
յառաջագոյն որպէս ասի։
Ի յԱբգարէ Թագաւորէ[11]
նոցունց շինեալ ես լինէի,
Նաև նմին գոլ վիճակի
առաքելոյն Թադէոսի,

---

74 Կ լալոզս փխ լալիս Cf լալ ընդ լալողսն փխ լաց ընդ լալիս $AB_{1-3}$ DEgH ամենայնի Cf Փ վշտայի փխ ամենայնի L զջուր Cf?Փ այս տողի փոխարեն ունեն՝

Լեր արտամակից թախծեալ սրտի,
ըստ առաքելոյն սուրբ հրամանի.

75 $AB_{1-3}$ սորին փխ ստորին L ԹԿ կողմն $F_{12}$H յաշխարհի
76 $F_2$ յարևու $B_1F_{12}$K վերադարձի
77 EK Թորքոմի $F_{12}$HJL Կ յազգ H ազինքն փխ ծնունդն g յԱբեզի H այս տողի փոխարեն ունի 78 և ընդհակառակն՝ 78-ի փոխարեն 77 տողը:
78 K յաթոռ H պարթևազեանց Կ պարթևազնի f թագաւորաց $F_2$ յԱր-շակունի
79 $AB_{12}$ Կ էիր փխ էի
80 K յԱբկարէ $F_{12}$H ԿՓ յԱբգարու Cf թագաւորի E նոցուն փխ նո-ցունց
81 $B_{13}EF_{12}$fHJKL ԹԿՓ նման փխ նմին E Թաթէոսի f Թադոսի

*Յորմէ բղխեալ ծաղիկ բարի*
*և շառաւիղ դաւաղանի*
*Գրիգորիոս Պարթևադին՝*
*Լուսաւորիչն այնմ աշխարհի,*
*Խոստովանողն Քրիստոսի*
*և մարտիրոսն կենդանի։*
*Եւ արդ, առ քե՛զ բանիւ բերիմ,*
*Հայաստանեայցդ եկեղեցի,*
*Յորում կաթեաց շողն երկնային*[12],
*զպաղն Հալեաց զՀիւսիսի.*
*Լոյսն անստուեր ծաւալեցաւ,*
*և Ճառագայթն անճառելի*
*Սաստիկ եՀար ուռամբն ոսկի,*
*ձայնք Հնչեցին յստորինս երկրի։*
*Ընդ Հրեշտակացն բազմութիւնք*
*յերկնից Հեղան ըստ Հիւղէի,*
*Եւ մարդկային ազգ երկրածին*
*վերասլացան յեթերն երկնի։*
*Որ անապատն էիր վայրի,*
*եղեր նման փթթեալ ծաղկի*

---

*82* g *բխեաց* L *բղխեաց փ ի* փխ *եւ* $AB_2$ *շառաւեղ.* պահում ենք *շառաւիղ* ձևը և այսուհետև այլընթերցումները չենք նշում

*83* J *կ պարթևազինն* f *լուսաւորչին* g *թ լուսաւորիչ* $F_{12}K$ *յայնմ* E *աշխարհին* $F_2$ *յաշխարհի կ հայկազուն* փխ *այնմ աշխարհի*

*85* $B_1D$ *բերի* g *բերեմ* $AB_3$ *Հայաստանեայցդ* $B_2CfK$ *կ Հայաստանեաց* $EF_{12}gHL$ *թփ Հայաստանեայց*

*86* $B_1F_{12}H$ *կայթեաց* $AB_2g$ *զհիւսիսային* $F_1$ *զհիւսուսի* f *զհիւսիւսի* H *հիւսիսի*

*87* *թ ճառագայթ*

*88* $F_1$ լուսանցքում ունի սրբագրություն՝ եառ փխ *եհար* E *էառ* փխ *եհար* $AB_1$ *ուռամբն* HJ *փ ուռամբ* $AB_{1-3}CDEF_{12}fgHJKL$ *փ ստորինս կ ստորին փ յերկրի*

*89* $B_{1-3}K$ *ընդ* փխ *անդ* gJL *բազմութիւն* $B_{13}CDEF_{12}fgHJKL$ *թկփ հեղեղի*

*90* $F_{12}K$ *յազգ* $F_{12}H$ *վերսլացան*

*91* $F_{12}K$ *յանապատն* L *կփ անապատ* $EF_{12}HK$ *'ւ էիր* փխ *եղեր*

Եւ կուսական արեամբ ներկեալ՝
 պայծառացար ի գոյն վարդի։
Որդիս ծնար յաւազանի,
 որ քան զաւազ շատ է ծովի,
Դիեցուցեր կաթն ի ստենէ,
 սնուցեր արեամբն կենդանի,
Դաստիարակ մանկանց բարի
 տալով զՕրէնսն Մովսէսի[13],
Եւ կերակուր կատարելոց՝
 զԱւետարանն Քրիստոսի։
Յայնժամ էիր երանելի,
 այսու բնաւից դու ցանկալի՝
Երկնաւորաց և երկրայնոց
 և կենդանեաց բոլոր սեռի։
Բայց հարցանեմ, ո՛վ բաղձալի,
 բանիս խնդրեմ պատասխանի.

---

92 $F_2$ յարեամբ
93 A որպէս (g որդ իս) փխ որդիս H փ առաջանի J յառաջանին H չիք շատ է փ էր փխ է $B_{1-3}CDfgJ$ ծովի H ծովին
94 g դիացուցեր A ստովի փխ ստենէ; $B_{1-3}DF_2J$ ստենի g արեամբդ H արեամբ
95 $B_1D$ բերի փխ բարի K չիք՝ բարի ի եդեր փխ բարի H 95 տողը չունի g ի Մովսիսի H Մովէսի
96 Թ կենդանի փխ Քրիստոսի
97 $EF_{12}K$ յայն ժամն H անել ստանելի փխ երանելի
98 $AB_{23}CfgH$ երկնաւորացն $AB_{12}EfH$ երկնայնոց g երկայնոց փխ երկրայնոց
99 A բոլոր սեռի փխ ով բաղձալի ի նաղելի փխ բաղձալի Cg փ այս տողից հետո ունեն՝

Տեղեկացոյ զիս հաւատի (g հաստատի)
 հարցանելեացս այս ըստ կարգի։

Այժմ ո՞ւր է թագն քո վարդի
և կամ պսակն հրաշալի,
Ո՞ւր զարդարանքն դշխոյի՝
հարսին որդւոյ թագաւորի,
Ո՞ւր պատմուճան հարսնարանի
կամ ոսկեհուռ վերջաւորի:
Է՞ր չէ փեսայն ի խորանի,
կամ փեսաւէրքն՝ ի տաճարի:
Ո՞ւր են մանկունքն առագաստի,
զի՞ ոչ հնչեն զերգսն Դաւթի:
Զիա՞րդ լռեալ ոչ հարկանեն
զփողն հնչող Տարօնացի[14]:
Ո՞ւր պարարակն եղնամոլի,
զիա՞րդ ի քեզ ոչ ղենանի,
Կամ մատռուակքն բաժակին
զի՞ ոչ բաշխեն զանուշ գինին:

---

100 Թ այժմ արդ ո՞ւր է թագ քո վարդի EF$_{12}$HK Փ քո թագն B$_1$E վարթի C վարդի փխ զարդի B$_1$ ցանկալի փխ հրաշալի L այս տողից հետո ունի՝

Ո՞ւր է կամարն յանձնագեղ,
ոսկի մանեակն զարդանոցի:

101 EF$_2$H ո՞ւր է փխ ո՞ւր B$_1$ զարթարանքն F$_2$HJ զարդարանք AB$_2$ դժխոյի J ընդ դշխոյի B$_1$CEK որդոյ F$_2$ 'ւ որդոյ: Պահում ենք երկու ձեւն էլ. այստեղ այլընթերցումները չենք նշում:

102 կ պատմուճանն g պատմուճման Թփ պաճուճանք C ոսկի հուռ փկ ոսկեհուռն

103 B$_1$D ո՞ւր B$_4$EF$_{12}$gHK որ փխ էր կ փեսաւէրն B$_1$ խորանի DL կ խորախճանի փխ տաճարի

104 B$_{1-3}$CF$_{12}$HJKL մանկունք F$_2$J յառագաստի EF$_{12}$K զերգս CfHL փ զերգն փ զԴաւթի

105 fH հարկանի B$_2$ փողն EF$_{12}$ հնչէն H հնչեալ փխ հնչող L տարօնացի

106 B$_3$CDEF$_{12}$fgJKL (D եղնամոլի) պարարակ եղնամոլին B$_2$H պատարաց (H եղնամոլին) B$_1$EF$_{12}$gJ Թփ դենանին

107 H չիք կամ EF$_{12}$K մատռուակն g մատրակն H մատռուակն DH բաժակի JL զանոյշ D գինի

Ո՞ւր բարեկամքն զուարճալից
ընդ գիտ որդւոյն անառակի
Կամ տարածեալ գիրկ հայրենի՝
առ ի համբոյր մեղաւորի։
Ո՞ւր քաղցրաձայնն երաժշտի
կամ գեղգեղումն եղանակի,
Ո՞ւր ընթերցողքն են Սուրբ Տառի,
կամ վարդապետքն՝ ի հանդիսի,
Ո՞ւր է աթոռ հայրապետի,
կամ քահանայք՝ ի սուրբ բեմբի,
Ո՞ւր սարկաւագք են ի սպասի,
կամ պաշտօնեայք՝ պատարագի։
Ո՞ւր են խնկոցն ի քեղ բուրմունք՝
աներևոյթ 'ւ երևելի,
Կամ ժողովոցն գումարումն՝
յաւուր տօնիցն տէրունի։
Ո՞ւր են գահոյք թագաւորի
Վաղարշապատ քո քաղաքի,

---

108 թ· բարեկամք $B_1$D կ զուարճալի $B_2$g զուարճացեալ $EF_{12}$H զուարճացին K փ զուարճակցին $EF_{12}$fHK որդւոյ $F_{12}$HK թ· անառակին
109 $B_{13}$D գիրք փխ գիրկ g փ հայրենին D համբոյր g փ մեղաւորին
110 $EF_{12}$HJKL թ· քաղցրաձայն (C քաղցր ձայնն) փխ քաղցրաձայնն. կ եղանակի փխ երաժշտի AC աղաղակի կ երաժշտի փխ եղանակի $F_1$ նախապես աղաղակի, ապա սրբագրված՝ եղանակի
111 $B_1$D ո՞ւր են ընթերցողքն սուրբ տառի $CEF_{12}$gK թ·կ չիք են L ի փխ են H այս տողը չունի $B_3$C թ· վարդապետք
112 տողը L չունի $EF_{12}$K փ քահանայքն $B_{12}$DfJ թ·կփ բեմի EK բեմպի
113 $B_1$Dfg փ սարկաւագքն CEK սարկաւագն $F_1$H ուր սուրբ խորհուրդքն $F_2$ քահանայքն $B_{1-3}$DEHfKL թ·կ ի սպասու $F_{12}$ ի յսպասու փխ են ի սպասի CJ սպասու փխ սպասի $AB_2$ պաշտօնեայք
114 $AB_{12}$ թ·կ խնկոցն $B_1$D բուրումն K բուրմունքն $B_2$g աներևոյթք $AB_2$CHK երևելիք թ· չիք 'ւ H չիք աներևոյթ 'ւ երևելի
115 H չիք կամ ժողովոցն գումարումն թ· գումարման
116 թ· արդ ո՞ւր փխ ո՞ւր են

Կամ նախարարքն ո՞ւր արքայի
    Այրարատեանդ գաւառի։
Ո՞ւր են իշխանքն, որ առաջի,
    կամ՝ զինակիրքն, որ են վերջի,
Ո՞ւր զօրականքն յասպարիզի,
    կամ լեգէոնքն՝ ի ճակատի։
Ո՞ւր մեծամեծքն ի բազմոցի,
    կամ ո՞ւր սեղանն ամենայի,
Ո՞ւր են ազատքն ի տաճարի,
    կամ տեառնորդիքն ի ծաղկոցի։
Ահա բարձաւ այս վաղագոյն,
    յոյժ հեռացաւ, ոչ երևի.
Անուրջք 'ւ երազք էին յայտնի,
    արդ ծածկեցան ի զարթմնի։

---

117 fL Կ նախարարք J նախարարքն ԹՓ չիք ուր Կ մեծ փխ ուր $EF_{12}$ HK արքայից փխ ուր արքայի $AB_3HJL$ Թ Արարատեանդ $B_1CD$ $F_{12}$ Կ Այրարատեանըն $B_2$ Այրայրատեանդ EK Արարատեանն f Արայրատեանտ

118 Թ իշխանք H Թ որք $F_2$ Թ առաջին g նիզակիրքն HJL Թ զինակիրք $B_2$ ուր H ԹԿ որք փխ որ g զինի փխ են վերջի

119 A զօրականք $CDEF_{12}fgJK$ յասպարիսի L ասպարիսի պահում ենք ասպարիզի ձևը, այսուհետև այլընթերցումները չենք նշում, $AB_3K$ լեգէհոնքն Cf Փ լեգէոյքն $F_2$ լեգոնքն H լեքեոնք J լեգէօնն

121 H չիք են L ազքատքն փխ ազատքն այս տողից հետո H ունի հետևյալ տողերը.

Ահա զսեղանն աստուածային.
    որ միշտ զենոյր աստուածորդին,
Սերովբէքն ակումբ կային,
    եւ պետութիւնքն սարսէին։

122 H վաղաքուն փխ վաղագոյն $EF_{12}$ հեռաւոր փխ հեռացաւ $AB_3CE$ fgJKL ԹԿՓ որ չերևի փխ ոչ երևի $B_2$ 'ւ ոչ երևի

123 K յանուրջք Կ անուրջ $AB_{13}CDfH$ ԿՓ երազ $EF_1K$ 'ւ երազ $F_2JL$ 'ւ երազք L անդ փխ արդ $B_1DL$ ծաղկեցան $CEF_{12}fHK$ ԹՓ ծածկեցաւ $B_{12}D$ զարթմանի $EF_2JK$ զարդմընի g յարթմանի L վարդմնի Թ վարդենի փխ զարթմնի Կ յարթմնի

Այլ փոխանակ այսր ամենի
յույժ հակառակն տեսանի,
Քանզի նստիս որք և այրի,
տխուր դիմօք՝ լերդ ի սրտի։
Վասն այն զքեզ իսկ կոչեցից՝
լինել սգակից ինձ յայս վայրի,
Քանզի նման քոյն ցուցանի
իմոյս նորոգ եղեալ չարի։
Արդ, ուսուցես, ո՛վ սիրելի,
և զիմս ողբալ ըստ արժանի,
Իբրու հմուտ լալեաց բանի
և քաջ տեղեակ այրման սրտի։
Բայց և զքեզ յայս հրաւիրեմ,
արևելեան քաղաքդ Անի,
Կցորդ իմոյս լինել ձայնի
և սփոփիչ տարակուսի։
Քանզի և դու երբեմն էիր
վայելչական հարսն ի քօղի,
Մերձաւորաց յույժ ցանկալի,
Հեռաւորաց փափագելի։

---

124 $F_2$ արդ փխ այլ $B_1$Dg հակառակըն
125 J զերթ H չիք ի
126 $AB_{1-3}CDEF_{12}$fgJK Թ. սորոյ փխ այն H այնորիկ $B_{12}$Df Թ.կփ կոչե-ցի Կ զոլ $F_2$H այս
127 HL Թ. քոյդ փխ քոյն
129 Թ. իբրև $F_{12}$H կամ փխ և EK քաջ J այս տողից հետո ունի՝

Չի քո հմուտ զոլով սղի,
*1006* EF$_{12}$H այլ ասացէք (K անսացէք L կ ակնկալջիք) փխ ակնկալէք
L այս տողից հետո ունի՝

Եւ սորեայս տառապանաց
զօրամութիւն գնէք ի բաց·

*1007* EF$_{12}$K նախնոյն սուրբ փխ նախնին իմ H նախնոյն թկ նախկին E տաճարած EF$_{12}$HK թ զվերջին g թ չ՛լինի (կ ոչ լինի) փխ լինի EF$_{12}$ H սաստ K յառաջ D ոչ ցած փխ ցած
*1008* B$_1$CDfJL սայ փխ սա
*1009* EF$_{12}$JK խնդամ (H խնամ) փխ խնդման g կ ձայն թ բանս
*1010* H բարեպաշտից կ խաչապաշտաց փխ բարեպաշտաց F$_2$ յեկեղեցեաց կ եւ յընդանուր եկեղեցիաց փխ եկեղեցեաց հանրականաց
*1011* EK տառանց F$_{12}$gH տառաց կ գրեանց փխ տառից
*1012* B$_1$EF$_{12}$H թ կամ փխ տամ g տալ gL թկ աւետիս H աւետեաց EF$_{12}$H սպասեմ L պատմել թ այնր

Եւ յառօրեայս չարչարանաց
տեւել, տոկալ տրտմականաց,
Զի չէ ամօղ այս լինելոց,
ոչ առյապա կատարելոց,
Այլ փութապէս վճարելոց,
արագ արագ վախճանելոց.
Զի եկն եհաս աւուրց մերոց,
զոր ասացին ամաց թուոց,
Եւ ի տուեալ նշանս գրոց
տեսաք մօտ, թէ է գալոց։

13

Արդ, զայս տուաք բան սակաւուց
ձեզ մխիթար տրտմեցելոց՝
Յերկրաւորաց, 'ւ ոչ երկնայնոց,
յուսով սպասել, որ լինելոց։
Զի զայն հնար չէ ասելոց,
և ոչ մարդոյ բան խօսելոց,
Ո՛չ հողեղէն տեսեալ աչաց
և ո՛չ ունկամբ լուր լսելոց,

---

*1013* A յառորայս $F_{12}$HKL առօրեայս A տեւել L տոկմամբ ի դէմ վըշ-տաց փխ տոկալ տրտմականաց

*1014* H ամոյս Կ ամօք $AB_{1-3}CDEF_{12}$fgJKL յամօղ $EF_{12}$H եւ փխ ոչ gL Կ 'ւ ոչ H առապա Փ առյապայս

*1015* $EF_{12}$HK վաղճանելոց

*1016* L էհաս յաւուրս մեր L յամաց

*1017* L նա 'ւ ի փխ եւ ի g Թ տալոյ փխ տուեալ $AB_{1-3}CDEF_{12}$fHJKL Թկ ի գրոց փխ գրոց

*1018* $EF_{12}$HK տուեալ f տւայք

*1019* f երկրաւորաց HJKL չիք 'ւ A յերկրայնոց L յերկնայնոց

*1020* $F_{12}$H մի փխ զի Թ տուելոց փխ ասելոց

*1021* Փ տեսանելեաց փխ տեսեալ աչաց J չիք ոչ A ունկեամբ L ունկան $B_3CDEF_{12}$fKL կՓ լսելեաց

Ո՛չ է ի միտս անկեալ մարդոյ,
զոր պատրաստեաց Տէր իւր սրբոց։
Որով թէ դուք համբերիցէք
չարչարանացդ հասելոց,
Զարքայութիւն Տեառն ընտրելոց
էք ընդ նոսին ժառանգելոց,
Յորում անգուշ տեսանիցէք
զսիրելեաց անձինս ի լոյս։
Զորս այժմ ողբայք լալով անյոյս,
անդէն գնծայք տեսլեամբ սրբոց,
Անդր ի դրախտն էք մտելոց,
ի միասին զուարճանալոց,
Ի հայրենին, զոր կորուսաք,
յանմահական կեանս երկնայնոց։

### 14

Յորոց հայցեմ յանդ լինելոց՝
և զիս յիշել՝ տարտամ ոգւոց*

---

*1022* Փ որ չէ փխ ոչ է f թէ փխ է $B_1$CDfJL Կ միտ $B_{23}$ անկեալ DԿ մարդոյ H պատրաստեալ $B_2$g տէրն $B_2$g չիք իւր J իւրայնոց փխ իւր սրբոց

*1023* A համբերեցիք $B_1$CDfg Փ համբերեցէք H համբերիցէ Կ համբերեսջիք $EF_{12}$HK չարչարանացն

*1024* g յարքայութիւն J առ փխ տեառն $B_1$CDf ԹԿՓ նըմին $EF_{12}$HK նոցին

*1025* L ի լոյս զանձինս սիրեցելոց $B_{13}CDEF_{12}$fH ԹԿՓ զսիրելեացն $AB_{1-3}$CDfgHKL Փ անձինսն $EF_1$ անձինսքն $F_2$ անձինքն

*1026* $B_1$CDfgHJL ԿՓ զոր A Կ անդրէն $EF_{12}$HK անդր փխ անդէն

*1027* $B_2$g արդ Թ անդ Կ դրախտին Թ չիք էր CDH մանելոյ f մատնելոյ Թ եւ ի փխ ի

*1028* $B_{12}$DgK ԹԿ զհայրենիսն J կորուսիք H անմահական $AB_{1-3}$CDE $F_{12}$fJK ԹՓ կեանքն g կեանսն H կեանք

*1029* ADE որոց հայցեմք $F_{12}$KL անց H անդր gL տարտամս Կ զատրտամս $B_2DEF_2$JK ոգոց Կ հոգւոց L յոգոց Փ յոգւոց

---

* № 8436 ձեռ. 1029 տողից հետո ունի՝
Յիշատակարան նորին սրբոյ Ներսէսի Հայրապետին։

Զլոկ համանուն Մեծին Հայոց
գՆերսէս՝ բացեալ բարեաց գործոց,
Եւ շառաւիղ նորին ստոոց,
բայց ոչ նման գոլ արմատոց,
Զողբերգական բանիս գրող՝
առ ի սփոփանս տրտմեցելոց,
Քեզ և բոլոր մարդկան այլոց,
որք են ի սուգ վասն սոցունց։
Քանզի բանիւ գիրս եղելոց,
մեր ժամանակս դիպելոց,
Որով տուաք ոչ թէ գիտնոց,
այլ ախմարաց և տղայոց,
Զոր պահանջեաց տարփմամբ սիրոյ
եղբօրորդին իմ ըստ մարմնոյ՝
Մանուկ տղա գոլով տիոց
և կատարեալ յիմաստ գրոց,
Ներհմտացեալ յարհեստ գինուց,
ըստ հրահանգին Հռոմայեցւոց։

---

1030 $B_1EF_{12}HK$ հոմանուն D կ անուն Cf մեծի f Ներսէս K պատարկ փխ բացեալ

1031 $AB_{12}D$ շառաւեղ $AB_3$f նորուն $F_2$ ստոուց թ բարեաց գործոց փխ գոլ արմատոց

1032 ց յօղբերգական $EF_{12}HK$ գրոց (L գծող) փխ գրող $B_3$L.փ տրտմելոց Cf ողորմելոց

1033 $F_{12}H$ մեզ (կ ձեզ) փխ քեզ կ ազգիս հայոց փխ մարդկան այլոց կ որ էք փխ որք են $B_1EK$ սուք ց փ նոցունց H եղելոց փխ սոցունց

1034 կ բանիս այս փխ բանիւ գիրս $B_2HL$ գիս (ց գայս) փխ գիրս H եւ սոցունց փխ եղելոց

1035 կ որ է փխ որով C տուայք DHJL թկփ ախմարաց

1036 H եղբայր որդին

1037 կ տիոյ $B_3JK$ յիմաստս H իմաստ $B_{1-3}CF_1$fKL թփ ոգւոց DEJ ոգոց $F_2$ յոգոց H ոգով կ հոգւոյ փխ գրոց

1038 $B_2$ գերհմտացեալ ց լերհմտացեալ թ ներ հմտացեալ H արուեստ

Գոլ աջողակ ի նուս ձիոց,
որպէս օրէն է վարժելոց։
Անուն նախնեաց յորջորջելոց
է Ասլիրատ[65] մակձայնելոց,
Զոր արարաք խրախճանելոց,
իբր զբօսանս հրճուելոց։
Արդ, առընկա՛լ բան դուզնաքեայ
և վերծանեա՛ լստ իմաստնոց,
Ո՛չ առաւել և ո՛չ նուազ,
այլ ի յատին բերեալ չափոց,
Յոր վայելեա սիրով սոցունց,
լրմամբ տառիս քո խնդրելոց,
Զոր ստտանօր եմ յանգելոց՝
զգիրս բանիս վճարելոց,
Ի փառս Հօր ատրտելոց,
Հոգւոյն 'ւ Որդոյն կատարելոց։

---

1039 D գոլով L յաջողակ $B_1$DK զինուս ($B_2$g ի չուս CE$F_{12}$fHJL թկ զինուց) փխ ի նուս

1040 g զանուն կ յանուն g նախնեացն

1041 $B_3$gKL թ ի փխ իբր C ի զովութիւն ջերմին սզոց փխ տողի L հրճուեցելոց f չիք իբր զրօսանս հրճուելոց

1042 A առընդալ Df ընկալ $B_1$D բանդ թ բանս կ զբանս $B_1$ դուզնաքես g այս տողը չունի L վերծանիր H իմաստնոյ

1043 H բերկրեալ փխ բերեալ A չափեալ $B_1$D չափոյ

1044 A փ յոր վայելէ $B_{23}$CDfJKL թ վայելեալ EH բարի փխ սիրով g նոցունց $B_3$ լրմամբս H տառին թ տառիցս

1045 L իմ փխ եմ E յանկելոց $F_2$ անդելոց $B_2$g զգիր փխ զգիրս EK թ բանից K վճարելոց

1046 $B_{12}$J որդւոյ $B_3$ 'ւ որդւոյն CK փ 'ւ որդոյ 'ւ D 'ւ որդւոյ f 'ւ որդւոյ հոգւոյ $F_1$gH կ որդոյ փխ 'ւ որդոյն L թ հոգւոյ 'ւ որդւոյ (թ որդւոյ) L այս տողից հետո ունի՝

Որ միշտ օրհնի յիւր ստեղծուածոց,
յերկնաւորաց և յերկրայնոց։

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՑԱՆԿ ՁԵՌԱԳՐԵՐԻ

## Ա. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Բնագիրը պատրաստել ենք ձեռագիր ու տպագիր հետևյալ օրինակների համեմատությամբ.*

A — *ձեռ. № 4207*
$B_1$ — *ձեռ. № 1548*
$B_2$ — *ձեռ. № 5707*
$B_3$ — *ձեռ. № 5255*
C — *ձեռ. № 7104*
D — *ձեռ. № 8575*
E — *ձեռ. № 1541*
$F_1$ — *ձեռ. № 1558*
$F_2$ — *ձեռ. № 5960*

f — *ձեռ. № 2079*
g — *ձեռ. № 2407*
H — *ձեռ. № 1631*
J — *ձեռ. № 5924*
K — *ձեռ. № 1539*
L — *ձեռ. № 6597*
*Թ — Թիֆլիսի 1829 թ. տպագիր*
*Կ — Կալկաթայի 1832 թ. տպագիր*
*Փ — Փարիզի 1827 թ. տպագիր*

*Ներսես Շնորհալու Ողբը պատկանում է միջնադարի հայ մատենագրության այն երկերի թվին, որոնք մշտապես ընդօրինակվել են գրիչների ձեռքով և լայն տարածում գտել ընթերցողների շրջանում։ Տարբեր վայրերում, հայկական ձեռագրերի այլևայլ հավաքածուներում, կան Ողբի հարյուրավոր գրչագրեր։ Բավական է ասել, որ միայն Երևանի Մաշտոցյան մատենադարանում նրա ամբողջական ու թերի օրինակների քանակը հասնում է 55-ի։*

*«Ողբ Եդեսիոյ» երկը մինչև այժմ ունեցել է վեց հրատարակություն։ Դրանցից առաջինը Մադրասի 1810 թ. տպագիրն է (հրատարակել է Սարգիս Ծափուր Աղավալյանցը «զգուշաւոր քննութեամբ» և «բաղդատութեամբ*

ձեռագիր օրինակաց»)[1], երկրորդը՝ Փարիզի 1827 թ. տպագիրը (հրատարակել է նշանավոր բանասեր Հովհաննես Զոհրապյան Կոստանդնուպոլսեցին 3 ձեռագրի հիման վրա), երրորդը՝ Շահան Ջրպետյանի 5 ձեռագրի համեմատությամբ Թիֆլիսում 1829 թ. կատարված հրատարակությունը, չորրորդը՝ 1832 թ. Կալկաթայի տպագիրը, որը Մադրասում տպվածի վերահրատարակությունն է։ 1869 թ. Փարիզում ականավոր արևելագետ Էդուարդ Դյուլորիեն իր Recueil des Historiens des Croisades. Documents Armeniens գրքում 5-րդ անգամ լույս ընծայեց Ողբը՝ նոր ձեռագրերի օգտագործմամբ և ֆրանսերեն հանդիպադիր թարգմանությամբ։ Վերջապես, Շնորհալու երկը վեցերորդ անգամ տպագրվեց Երևանում, 1968 թ., որը, սակայն, Թիֆլիսի տպագրի սոսկական վերահրատարակումն է և բնագրային առումով որևէ նորություն չի բերում։ Հիշյալ հրատարակությունները, մանավանդ նրանցից առաջին հինգը, որքան էլ խնամքով ու հմտությամբ են կատարված, այնուամենայնիվ, մեր ժամանակի պահանջները բավարարել չեն կարող։ Հրատարակիչներն իրենց տրամադրության տակ ունեցել են սահմանափակ թվով գրչագրեր և լավագույն ընթերցվածների բացակայության պայմաններում ինչ-ինչ տեղերում ստիպված են եղել չնկատել կամ հաշտվել իրենց օգտագործած ձեռագրերի աղճատումների հետ, էլ չենք խոսում բնագրագիտական այն սկզբունքների մասին, որոնք միանգամայն հնացած են։ Հ. Զոհրապյանի հրատարակությունն անգամ, որ եղածների մեջ ամենակատարյալն է, ունի չափազանց աղքատիկ տողատակ (բերված գրքի վերջում) և շատ ընդհանուր, միայն խիստ կարևոր ձեռագրական տարբերություններ է պարունակում։

Ձեռնամուխ լինելով Շնորհալու բանաստեղծական լավագույն երկի նոր բնագրի պատրաստմանը՝ մենք մեր առաջ խնդիր ենք դրել Մաշտոցյան մատենադարանի բազմաքանակ ձեռագրերի, ինչպես նաև լավագույն տպագիրների հանգամանալից ուսումնասիրման ու համեմատության միջոցով ճշգրտել ու աղճատումներից մաքրել այն, քննական մոտեցում հանդես բերել «Ողբ Եդեսիոյ» ձեռագիր ու տպագիր օրինակների տարբերությունների, հեղինակին անհարիր շեղումների ու հավելումների նկատմամբ, վերականգնել մի բնագիր, որը հարազատ լինի միջնադարի ականավոր բանաստեղծին, և ներկայացնել այնպիսի տողատակ, որը բնագրի հետ միասին լիովին արտացոլի ձեռագրական ողջ հարստությունը։

Ձեռագրերի նախնական համեմատությունը մեզ բերեց այն համոզման, որ նրանք պարունակում են ինչպես բառային կարգի (հատկապես հոմանիշային բնույթի), այնպես էլ ավելի ցայտուն՝ տողային տարբերություններ, միմյանցից զանազանվում են ավել կամ պակաս տողերով ու հատվածներով, ընդհանրապես տողերի տարբեր քանակով և այլն։

---

[1] Մադրասի տպագիրը մեզ մատչելի չի եղել Սովետական Միության գրադարաններում չլինելու պատճառով։

Ողբի մեզ հասած ձեռագրերից հնագույնը ոչ միայն մեզանում՝ Մաշտոցյան մատենադարանում, այլև, որքան մեզ հայտնի է, աշխարհասփյուռ հայերեն ձեռագրերի մեջ առհասարակ, № 4207 գրչագիրն է (A)։ Այս օրինակը, գրչության ժամանակով լինելով հեղինակին համեմատաբար մոտ (ընդօրինակված է 1284 թ., Շնորհալու մահից 111 տարի անց) և գրված լինելով բուն Կիլիկյան Հայաստանում, Ադանա քաղաքում, իշխան Օշինի համար, բոլոր ձեռագրերի մեջ ամենաանաղարտն է և անսխալը[1]։ Բնագիրը վերականգնելիս մենք, ինչ խոսք, կողմնորոշվել ենք նույն ձեռագրով՝ առանձին դեպքերում, անշուշտ, առաջնություն տալով նաև մյուս օրինակների վստահելի ընթերցվածներին։ A օրինակը երկի տողաքանակի և տողերի հաջորդականության իմաստով ևս կատարյալ է. այն, ինչպես և մեր բնագիրը, պարունակում է 16 վանկանի 1046 տող, ապա և Ներսես բանակապով (ակրոստիքոս) հավելյալ ութ տող, որ մենք անջատել ենք բնագրից իբրև ո՛չ հեղինակային և բերում ենք նույն ծանոթագրություններում (այդ մասին քիչ հետո)։

Ինչպես A գրչագրի հետ մյուս օրինակների մանրամասն համեմատությունը ցույց տվեց, Ողբի ձեռագրերը, ըստ իրենց ունեցած գրչական տարբերությունների, բաժանվում են մի քանի խմբի։ Այդ խմբերից որոշակի առանձնանում են №№ 4207 (A), 7104 (C), 8575 (D), 2079 (I) գրչագրերը։ Ավելորդ չենք համարում այստեղ բերել այն ձեռագրերի համարները, որոնք մտնում են առանձին խմբերի մեջ[2]։

B խումբ

Ձեռ. №№ 1548, 5707, 5255, 1541, 1540։ Այս խմբի ձեռագրերից օգտագործել ենք չորսը, այն է՝ 1548 ($B_1$), 5707 ($B_2$), 5255 ($B_3$), և 1541-ը՝ (E), քանի որ վերջինս հարելով այս խմբի ձեռագրերին՝ նրանցից ունի և որոշ շեղումներ։ Չենք օգտագործել № 1540 ձեռագիրը, որը սոսկ վրիպակներով է տարբերվում մյուս չորս օրինակից։

---

[1] Ինչպես № 4207, այնպես էլ մյուս ձեռագրերի գրչի հիշատակարաններն ու հիշատակագրությունները նույն ծանոթագրություններում ավելորդ ենք համարում բերել՝ ելնելով այն հանգամանքից, որ դրանք մի մասով հրատարակված են, իսկ մնացած, ավելի մեծ, մասը մոտ ապագայում համապատասխան ժողովածուներում կհրատարակվի։

[2] «Ողբ Եդեսիոյի»՝ Մաշտոցյան մատենադարանում պահպանված ամբողջական ու թերի ձեռագրերի ընդհանուր ցանկը տե՛ս վերջում, որտեղ բերված են ձեռագրերի գրչության հանգամանքների (գրիչ, տեղ, ժամանակ, ծաղկող ու պատվիրատու) ու բովանդակության վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև նշված են մեզ հետաքրքրող բնագրի էջերը։

F խումբ

*Ձեռ. №№ 1558, 8569, 5960, 3218, 1539, 3421, 1546։ Սույն խմբից օգտագործված են 1558* ($F_1$) *և 5960* ($F_2$) *ձեռագրերը, իսկ 1539 ձեռագիրը ներկայացված է* K *պայմանական նշանով՝ խմբից որոշ տարբերություններ ունենալու պատճառով։*

*Մնացած չորս ձեռագրերի գրչական այլընթերցվածները չենք արտահայտել տողատակին, քանի որ առանձին արժեք չեն ներկայացնում։*

G խումբ

*Ձեռ. №№ 2407, 7219, 6027։ Սրանցից համեմատական բնագրին իր մասնակցությունն է բերել 2407* (G) *գրչագիրը։ Մյուսները նրանից տարբերվում են միայն վրիպումներով ու աղավաղումներով և բնագրի ճշգրտման ուղղով չեն կարող օժանդակել։*

H խումբ

*Ձեռ. №№ 1756, 912, 1631։ Օգտագործված է միայն 1631* (H) *գրչագիրը։*

J խումբ

*Ձեռ. №№ 1629, 1630, 5924, 5121, 5038։ Այս խմբի բոլոր օրինակները, բացի № 1629-ից, գրեթե նույնությամբ կրկնում են իրար, այդ իսկ պատճառով նկատի ենք առել նրանցից միայն մեկը՝ 5924-ը (J)։ 1629 ձեռագրի պարունակած հավելյալ տողերն ու որոշ տարբերությունները աստղանիշով վկայակոչել ենք էջատակին։*

L խումբ

*Ձեռ. №№ 7244, 6597, 5837, 8392, 9736։ Սույն գրչագրերը բոլորն էլ 18—19-րդ դարերի ընդօրինակություններ են, բխում են միմյանցից և ունեն հավելյալ որոշ տողեր։ Քիչ տարբերվում է միայն 5837 ձեռագիրը։ Հետաքրքիր է, որ 7244 ձեռագրի գրիչը իր բնագրի համար նշել է. «Գաղափարեալ այժմիկ, բաղդատութեամբ ընտիր-ընտիր և հնագիր օրինակաց, ի Կարնո քաղաքի մայր դպրատան ի 1828 ի յունվարի 28, գրչութեամբ ուրումն դպրի» (էջ 2ա)։ Սակայն ուշադիր համեմատությունը մեզ բերեց այն համոզման, որ սույն ձեռագիրը բխում է 6597 ձեռագրից, որը և օգտագործել ենք* (L)*։ Ի դեպ, այս խմբի 8392 գրչագիրը պատկանել է Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանին (էջերի վրա կա բանաստեղծի կնիք-ստորագրությունը)։*

M խումբ

*Ձեռ. №№ 8121, 8437, 9883, 9035, 9887, 10090։ Այս խմբի ձեռագրերից ոչ մեկը չենք օգտագործել, քանի որ նախնական հանգամանալից համեմատությունը մեզ հանգեցրեց այն համոզման, որ սրանք ոչ մի նորություն*

*չեն բերում ինչպես բնագրի, այնպես էլ տողատակի համար և հարում են մերթ այս, մերթ այն խմբին: Հետաքրքիր է, որ այս խմբի 8121 ձեռագրի գրիչը հիշում է իր օրինակի հիմք ձեռագրի մասին. «Եւ արդ ողբերգական տառս գաղափարեալ եղե ի Թուին ՌՄԺԸ (1769 թ.) յուխի Ե ի հին և յանվրէպ օրինակէ, ի Թուին ՌՂ (1641 թ.) գրեցեալ Յիսուս Որդւոյ» (էջ 200ա): Ըստ երևույթին այդ հիմք ձեռագիրը պետք է լինի Մաշտոցյան մատենադարանի № 7219 գրչագիրը, որն օրինակված է նույն՝ 1641 թ.:*

*Այս խմբերից դուրս կան մի շարք ամբողջական (ձեռ. №№ 10285, 8755, 3226, 3267, 8436) և պակասավոր (ձեռ. №№ 424, 2027, 2672, 5056, 6998, 8735, 8989, 9426, 9887, 9933) ձեռագրեր՝ զուտ գրչական բնույթի տարբերություններով, որոնք չենք արտահայտել՝ տողատակն աննշան ու ավելորդ ընթերցվածներով չծանրաբեռնելու նպատակով: Հետաքրքիր է, որ միջնադարում «Ողբ Եդեսիոյ»-ի մի հատվածը (880—907 տողեր) անկախ երկի արժեք է ձեռք բերել և մտել որոշ գանձարաններ՝ «Տաղ մարտիրոսաց ի Ներսիսէ» (ձեռ. № 424), «Տաղ ամենայն մարտիրոսացն» (№ 2027), «Տաղ սրբոց մարտիրոսացն ի Ներսէս կաթողիկոսէ» (№ 2672), «Գանձ ի տաղ մարտիրոսաց» (№ 6998) և նման վերնագրերով, այնպես որ մեր նշած թվերի ձեռագրերի մի մասը սոսկ այդ հատվածն է պարունակում, մինչդեռ մյուս մասում բնագիրը պարզապես պակասավոր է հասել:*

*Ողբի բոլոր ձեռագրերի մեջ առանձնահատուկ է № 71 գրչագիրը: Նրա բնագիրն զգալի տարբերություններ ունի թե՛ A օրինակից և թե՛ բոլոր մյուս ձեռագրերից: Այստեղ Ողբը բաղկացած է 1060 տողից, մինչդեռ ինչպես A ձեռագիրը, այնպես էլ մեր պատրաստած բնագիրը պարունակում է 1046 տող: № 71 ձեռագիրը բնագրի մի քանի տասնյակ տողերի փոխարեն ունի բոլորովին այլ տողեր, էլ չենք խոսում բառային տարբերությունների մասին, որոնք հսկայական քանակություն են կազմում: Այդպիսով, մենք գործ ունենք Ողբի այլ տարբերակի, ավելի ճիշտ՝ առանձին խմբագրության հետ: Ահա թե ինչու խուսափեցինք այդ խմբագրությունը ևս ընդգրկել մեր ընտրած 15 ձեռագրերի և 3 տպագիրների շարքը՝ հարմար գտնելով հետագայում այն հրատարակել առանձին, մի այլ առիթով:*

* *
*

*Ողբի խորագիրը տարբեր ձեռագրերում տարբեր է: Բերենք դրանցից երեքի սկսվածքները.*

A—*Տեառն Ներսէսի**
*սրբազան եպիսկոպոսի**՝*

---

* D 1-ին տողը չունի:

** $B_3$ 1-ին տողից հետո ունի *Եւ իմաստասէրի* Φ չունի *Սրբազան եպիսկոպոսի՝ եղբօր տեառն Գրիգորիսի:*

Եղբօր տեառն Գրիգորիսի
Հայոց կաթուղիկոսի*։
Cf Ի Ներսիսէ սուրբ Շնորհալի՝
եղբօր մեծին Գրիգորիսի,
Հայաստանեայց (Í Հայաստանեաց) պատրիարգի,
զարմից մերոյն սուրբ Գրիգորի։
Ձեռ. № 1756—Նորին տեառն Ներսէսի Կլայեցւոյ
Հայոց կաթուղիկոսի ասացեալ
Ողբք վասն քաղաքաց
և վասն առման Ուռհա քաղաքին

Ինչպես տեսնում ենք, բերված տողերի տարբերությունները ակնհայտ են, սակայն առանց երկբայելու կարող ենք ասել, որ այդ տողերը հետագա դարերի գրիչների մեծարանքի տուրքն են Շնորհալուն։ Դիտենք հենց առաջին տողերը.

A Տեառն Ներսէսի...
Cf Ի Ներսիսէ սուրբ Շնորհալի...
1756 ձեռ. Նորին տեառն Ներսէսի Կլայեցւոյ...

Պարզ է, որ Շնորհալին երբեք իր մասին այդպես չէր արտահայտվի։ Բացի այդ, ինչպես գիտենք, «Ողբը» գրված է 1145 կամ 1146 թթ., երբ Շնորհալին դեռես կաթողիկոս չէր, հետևաբար, եթե նույնիսկ իր մասին գրելու էլ լիներ, չէր կարող այդպես գրել։ Ձեռագրերի համեմատությունը ցույց տվեց, թե որքան իրարից տարբեր են այդ երկու տողը։ Ավելորդ չենք համարում այստեղ վկայակոչել հետամուտ այդ տողերի համար նաև մնացած ձեռագրերի պարունակած տարբերությունները՝ A ձեռագրի համեմատությամբ.

1 $B_1$ երգ յօգեալ տէր E երգ $F_{12}$H երգս ոգեալ K՞երգ կ երգս է ոգեալ տէր $B_2$gH Ներսիսի $B_1$ և կաթուղիկոսի $B_3$g սրբոյ կաթողիկոսի հայոց E կաթուղիկոսի $F_{12}$H և սրբազան կաթուղիկոսի K կաթուղիկոսի կ և սրբազան հեղինակի L արքեպիսկոպոսի։

2 $B_1EF_{12}K$ կ սրբոյն H եղբայր սրբոյն փխ եղբօր տեառն $B_1E$ $F_{12}HK$ կ մեծի հայրապետի փխ կաթուղիկոսի։

«Ողբի» ձեռագրերից 16-ը վերջում ունեն հետևյալ տողերը, որոնց սկզբնատառերը հոդում են «Ներսես».

Նորոգ բանի այսր կարգի,
տէր Ներսիսի երախայրի.
Երկնախմբից նա պարակցի,
երից անձանցն հաւատ լինի,

* $B_2$ 2-րդ տողը չունի։

Բարունի անդ յորջորջի,
առ մեզ պատգամ աստ առաքի,
Սիրով հոգւոյն հեզ երևի,
զտէրունիսն բարբառի.
Եկայք, որդեակք իմ սիրելիք,
որոց երկիւղն է պանծալի,
Սրբեալ սրտիցն, որ ի մարմնի,
աստուածութեանն միշտ երևի։

Ճիշտ է, Շնորհալին իր ստեղծագործությունների վերջում սովորաբար ունի ծայրակապով հիշատակարաններ՝ «Ներսէս», «Ի Ներսէսէ», «Ներսէսի է» և այլն, բայց մեզ հավանական չի թվում, թե վերևում բերվածը Շնորհալու գրածն է, քանի որ նրանում բանաստեղծի մասին խոսվում է իբրև վախճանվածի։ Կարծում ենք, սա ևս, ինչպես և պոեմի խորագրի հավելյալ տողերը, հետագա գրիչների տուրքն է սիրելի բանաստեղծին, թե չէ ինչպե՞ս կարող էր ինքը՝ Շնորհալին, իր մասին գրել.

Երկնախմբից նա պարակցի
Երից անձանցն հուպ լինի... և այլն։

Ահա թե ինչու սույն հիշատակարանը բերում ենք այստեղ և ոչ թե բնագրում։

* *
*

«Ողբ Եդեսիոյ» պոեմի բնագիրը մեզ հասել է փոփոխություններով և հաճախ աղավաղումներով։ Այն հանգամանքը, որ Մաշտոցյան Մատենադարանում պահպանվում է «Ողբի» 55 ընդօրինակություն, պարզ է դառնում, որ դրանք գրչագրված են ավելի քան 55 մարդու կողմից (նույնիսկ որոշ ձեռագրերում սկսել է մեկը, ապա շարունակել ուրիշը)։ Ընդօրինակությունները միշտ չէ, որ կատարել են բարձր գրագիտության տեր անձինք, այստեղից էլ՝ հնարավոր սխալներն ու աղավաղումները։ Բնագիրը կազմելիս ցուցաբերել ենք հնարավորին չափ զգուշություն և ուշադրություն, աշխատել ենք մեր ուժերի ներածին չափ վերականգնել մայրօրինակը։

Հաշվի ենք առել այն ընդհանուր սկզբունքները, որոնք մշակվել ու կիրառվել են Հայ միջնադարյան տաղերգության վերջին տասնամյակների գիտական հրատարակություններում. այսպես՝

1. Բնագրի հատվածաբաժանումը կատարել ենք ըստ Հ. Ջոհրապյանի հրատարակության։

2. Հաշվի ենք առել գրաբար հայերենի պատմական զարգացման Շնորհալու ապրած ժամանակաշրջանի վիճակն ու առանձնահատկությունները և

*հենց իր՝ հեղինակի լեզվաոճական անհատականությունն ու նախասիրությունները, ըստ այդմ էլ, թեև նախապատվությունը տվել ենք այս կամ այն ընթերցմանը, սակայն մեկ անգամ ընդմիշտ չորդեգրելով միայն այդ ընթերցումը, այլ երբեմն նաև դրա այն այլընթերցումը, որը հավասարապես կիրառվել է այն ժամանակաշրջանում և՛ այլ հեղինակների, և՛ Շնորհալու կողմից, ինչպես օրինակ՝ շառավիղ—շառաւեղ, աղբիւր—աղբեր, սեւ-սեաւ, ախմար—տխմար և այլն:*

*3. Ենթակայական դերբայի* ող *վերջածանցով այլընթերցումն ենք միայն պահել,* աղ *կամ* օղ *այլընթերցվածները չենք տվել:*

*4.* Աւ *դրությունը, եթե* օ *դրությանը համարժեք է, վերածել ենք* օ*-ի և չենք դիտել իբրև այլընթերցված:*

*5.* Ն. *որոշիչ հոդի «անհարկի» կիրառությունները պահպանել ենք, ելնելով հանգաստեղծման անհրաժեշտությունից և ընդունելով, որ դրանք «զիջողաբար» կիրառվել են հենց հեղինակի կողմից:*

*6. Ստացական* դ *հոդի* տ *այլընթերցումը մեծ մասամբ զանց ենք առել:*

*7. Գաղտնավանկի* ը *ձայնավորը չենք պահպանել և տողատակում այդ մասին չենք նշել:*

*8. Տողատակում միայն հատուկ անունների այլընթերցումներն ենք մեծատառով տվել:*

*9.* Յ *կիսաձայնի ավելորդ և վրիպակային կիրառությունները նույնպես զանց ենք առել:*

*10. Հատուկ անունների և մի քանի հաճախադեպ բառերի այլընթերցումները տալիս ենք միայն մեկ՝ առաջին անգամ պատահելիս:*

*11. Չենք տվել բացարձակ վրիպակները և սխալ դրության որոշ ձևեր, որոնք հաճախ պատահում են նաև այլևայլ գրչագրերում:*

*12. Բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր ենք համարել, խուսափել ենք տողատակի* փխ*-ի ոչ պարտադիր կիրառությունից, եթե, առանց այդ էլ, այն դեթ լսելյան ընթերցվում է, չենք գրել:*

*13. Կետադրությունը նշանակել ենք ըստ արդի՝ կանոնների:*

*14.* Ի*-ով վերջացող և* ո *հոլովման ենթարկվող բառերի թեք հոլովաձևերը բնագրում գրել ենք* ւ*-ով (որդւոյ, թշնամւոյ, տեղւոջ և այլն): Առանց* ւ*-ի ընթերցվածները տողատակում չենք բերում:*

*15. Հավելվածում ցույց ենք տվել համեմատական բնագրի մեջ չմտնող այլ գրչագրերում պատահած մի շարք ուշագրավ տարբերակներ:*

*16. Խիստ անհրաժեշտ նկատողությունները տվել ենք «Ծանոթագրություններ»-ի մեջ:*

## Բ. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ադէն կամ Եդեմ — *դրախտ։ (էջ 22)*
2. Պետրոս — *ըստ Նոր կտակարանի՝ Քրիստոսի տասներկու առաքյալներից մեկը, որի գործունեության վայր հանդիսացավ Հռոմը։ (էջ 24)*
3. Ի Կեփայեան շինեալ վիմի — *կեփաս եբրայերենում և ասորերենում նշանակում է վեմ, ինչպես Պետրոս՝ հունարենում և լատիներենում։ Ակնարկում է Պետրոս առաքյալին (հմմտ. Աւետարան ըստ Յովհ. Ա, 42)։ (էջ 24)*
4. Պօղոս — *ծագումով տարսոնացի, որը, ըստ Նոր կտակարանի, հրաժարվեց հեթանոսությունից և դարձավ Քրիստոսի տասներկու առաքյալներից մեկը։ (էջ 24)*
5. Ղուկաս — *ավետարանիչ, համաձայն քրիստոնեական ավանդության՝ հեղինակել է չորս ավետարաններից մեկը և Գործք առաքելոցը։ Պողոս առաքյալի բարեկամ և ընկեր։ (էջ 24)*
6. Թադէ — *Թադեոս առաքյալ, որին հայկական ավանդությունը համարում է Հայաստանում քրիստոնեության առաջին տարածողը։ Ըստ այդմ հայ եկեղեցին կոչվել է առաքելական կամ Թադեոսի աթոռ։ (էջ 24)*
7. Կոստանդեայ թագաւորի — *նկատի ունի հռոմեական կայսր Կոստանդիանոս I-ին (306—337 թթ.)։ (էջ 25)*
8. Աղեքսանդրիա... որ ես աթոռ դու Մարկոսի — *Եգիպտոսի նշանավոր քաղաքը՝ Ալեքսանդրիան, որտեղ, ըստ ավանդության, Մարկոսը գրել է ավետարանը։ (էջ 27)*
9. Անտիոք — *քրիստոնեության նշանավոր կենտրոն հյուսիս-արևմտյան Ասորիքում (Սիրիայում), որտեղ, ավանդության համաձայն, Ղուկասը գրել է ավետարանը։ (էջ 29)*
10. Տան Թորգոմի — *Թորգոմը, ըստ պատմահայր Մովսես Խորենացու, եղել է Նոյի սերնդից, նրա որդի Հաբեթի տղան, հայ ժողովրդի նախա-*

*հայրերից մեկը, որի անունից և Հայաստանը հնում կոչվել է նաև Տուն Թորգոմի, իսկ հայերը՝ Թորգոմացիներ։ (էջ 30)*

11. **Ի յԱբգարէ թագաւորէ նոցունց շինեալ ես լինէի**—*Շնորհալին, հետևելով Մովսես Խորենացուն, Եդեսիա քաղաքի հիմնադիր է համարում հայոց (իրականում ասորոց) Աբգար թագավորին (1-ին դար)։ (էջ 30)*

12. **Յոռում կարեաց շողն երկնային**—*նկատի ունի էջմիածինը որպես երկնային լույսի վայր։ (էջ 31)*

13. **Մովսէս**—*մարգարե և օրենսդիր, ավանդությունը նրան է վերագրում Հին կտակարանի առաջին հինգ գրքերը (Հնգամատյան)։ (էջ 32)*

14. **...գփողն ճճչող Տարսոնացի**—*նկատի ունի Պողոս առաքյալին, որը քրիստոնեության մունետիկն էր ու քարոզիչը։ (էջ 33)*

15. **Նահանգդ Շարայի**—*Հայաստանի նշանավոր նահանգներից մեկը՝ Շիրակը, որն ըստ Խորենացու, այդպես է կոչվել ավանդական Շարայի անունից։ Այնտեղ էր գտնվում Բագրատունյաց Անի թագավորանիստ քաղաքը։ (էջ 37)*

16. **Սադիմ**—*քաղաք Հին Իսրայելում, որը ենթարկվել է ավերածության ու կործանման։ (էջ 40)*

17. **Սրոբէից**—*սերոբեները, ըստ Ս. գրքի, աստծուն փառաբանող երկնային վեցթևյան էակներ են։ (էջ 43)*

18. **Եդեսիա կամ Ուռհա (Ուրֆա)**—*քաղաք Միջագետքում, ասորական, հունական և հայկական մշակութային նշանավոր կենտրոն։ Ըստ ավանդության, Ալեքսանդր Մակեդոնացուց հետո, երբ Սելևկիոսն է իշխում Ուռհա քաղաքին, այն բարեկարգում է և կոչում իր աղջիկներից մեկի՝ Եդեսիայի անունով։ (էջ 43)*

19. **Ի Սառայէ փախստական Հագար 'ւ որդին հալածական**—*ըստ Հին կտակարանի, Սառան եղել է հրեաների նահապետ Աբրահամի կինը, իսկ Հագարը (նաև Ագար)՝ աղախինը։ Սառայի ամլության պատճառով, Սառայի իսկ գիտությամբ Հագարը Աբրահամից ծնում է Իսմայիլին՝ արաբների նախահորը։ Սառան այնուհետև սկսում է հալածել Հագարին և վտարել է տալիս նրան՝ զրկելով ժառանգության իրավունքից։*

*Միջնադարում կարծում էին, թե արաբները (հագարացիները) ծագում են Հագարի որդուց։ (էջ 51)*

20. **Սողոմոնեան խորան եղայ և Կեդարու անուանեցայ**—*Սողոմոնյան խորանը (Սողոմոն Իմաստունի անունից), ըստ Ս. Գրքի, եղել է հրեական պաշտամունքի վայր և սրբատեղի, իսկ Կեդարու վրանները (Իսմայելի որդի սևամորթ Կեդարի անունից)՝ Արաբիա անապատում թափառող բնակիչների օթևանները, որոնք հյուսված էին ուղտի սև բրդից։ (էջ 53)*

21. Զանգի—*Մոսուլի սուլթան, իշխել է 1127—1146 թթ.։ Բազմաթիվ արշավանքներից հետո, Եփրատի ափին գտնվող Կալա-Ջաբար ամրոցի վրա հարձակման ժամանակ, 1146 թ. մի գիշեր սպանվում է դավադրությամբ։ (էջ 55, 102, 113)*
22. Նիզամացիք և Բեհաացիք—*Մահմեդական բարբարոս ցեղեր, որոնք ապրում էին Պաղեստինում և Սիրիայում։ (էջ 56)*
23. Քերոբէ—*քերովբեները. ըստ Ս. Գրքի, երկնային ոգիներ են, որոնք հանդես են գալիս մերթ մարդու, մերթ կենդանու կերպարանքով և ունեն երկու, երբեմն չորս և վեց թև։ (էջ 60)*
24. Բրաբիոն (*հուն.* τὸ βραβεῖον) —*մրցանակ, հաղթանակի պսակ, նաև ծաղիկ։ (էջ 60)*
25. Գոս—*մեծ թմբուկ։ (էջ 70)*
26. Յորմէ և բան մարգարէին յառաջագոյն գուշակեցին յԵրուսաղէմ խօսեալ բանին...—*տե՛ս Հին կտակարանի «Մարգարէութիւն Երեմիայ» գիրքը։ (էջ 79)*
27. Դաղմատիայն—*նկատի ունի լատին (կաթոլիկ) եկեղեցականներին։ Դալմատիա երկիր հայ մատենագրության մեջ կոչվել է Իտալիան։ (էջ 79)*
28. Յուդա Մակաբէ (Մակաբեացի)—*Հին կտակարանի «Մակաբայեցւոց» կոչված գրքերի հերոս, որը ժողովրդի գլուխ անցած՝ պայքարել է Իսրայելի ազատության ու անկախության համար։ (էջ 80)*
29. Եղիազար—*Ահարոնի երրորդ որդին, որը դարձավ հրեից քահանայապետ։ Քահանայապետությունը Եղիազարի ցեղի մեջ մնում է յոթ սերունդ։ (էջ 80)*
30. Յովնան—*մարգարե, որը նավաբեկության ենթարկվելով՝ հրաշքով երեք օր մնում է կետ ձկան փորում և ապա ազատվում։ (էջ 81)*
31. Ղուրան—*մահմեդականների Սուրբ գիրքը։ (էջ 89)*
32. Մաքքա—*Մեքքա քաղաքը (Արաբական թերակղզում)՝ մահմեդականների սրբավայրը։ (էջ 89)*
33. Սեաւ Քար—*մահմեդական սրբություն Մեքքա քաղաքում։ (էջ 89)*
34. Խորասան—*գավառ Պարսկաստանի հյուսիս-արևելյան մասում։ (էջ 90)*
35. Նեռ—*ըստ Ս. Գրքի՝ չարության մարմնացում, Քրիստոսի հակապատկերը, որը պետք է կործանում բերի աշխարհին, բայց ինքն էլ հաղթվելու է Քրիստոսից։ (էջ 90)*
36. Մկրտիչ Մարգարէ—*Հովհաննես Մկրտիչ կամ Կարապետ-Մկրտիչ. ըստ Նոր կտակարանի, մկրտել է Հիսուս Քրիստոսին։ (էջ 90)*
37. Հերովդէս—*Իսրայելի թագավոր, որը, համաձայն Աստվածաշնչի, Երուսաղեմում հիմնեց թատրոններ ու կրկեսներ և տարված էր զեղխ կյանքով ու խրախճանքներով։ (էջ 91)*
38. Թասուլ—*մահմեդական տարյալ։ (էջ 94)*

39. Ռափսակ—*ակնարկում է Ասորեստանի Սենեքերիմ թագավորի ռազմապետին (մատովակ), որին ուղարկում են Լաքիսե, որպեսզի համոզի Եզեկիային անձնատուր լինելու: Սակայն Ռափսակը այդ պարտականությունը կատարում է ամբարտավանությամբ և ժպիրհ կերպով: (էջ 95)*

40. Թէ ախորժէք և լսէք ինձ, դուք ժառանգէք զբարութիւն—*տե՛ս Մարգարէութիւն Եսայա, Ա, 19: (էջ 96)*

41. ...խօսի Դաւիթ-Նարում զմեղսն, որ գործեցին—*տե՛ս Սաղմ., ՉԸ, 33: (էջ 96)*

42. Եբրայեցիք (Հեբրայեցիք)—*Աբրահամի սերնդի այն ճյուղը, որի բնակավայրն էր Ավետյաց երկիրը: (էջ 97)*

43. Մաղխամ—*ըստ Աստվածաշնչի, երբ Մովսես մարգարեն հրեաներին Եգիպտոսից առաջնորդում էր դեպի Ավետյաց երկիրը, հակառակ նրա զգուշացումների՝ ճանապարհին նրանք խառնակվեցին Մաղխամ կոչված կռապաշտ ցեղի կանանց հետ, որի պատճառով եհովան պատժեց հրեաներին: (էջ 97)*

44. Հեղի—*հրեաների քահանայապետ: Հեղին քառասուն տարի դատավոր էր Իսրայելում և բարեպաշտի անուն էր վայելում, միաժամանակ մեծ վաստակ ուներ, սակայն իր որդիների կրթության հարցում անտարբեր էր և անհոգ: Այս պատճառով Աստծու պատուհասը գալիս է նրա ընտանիքի գլխին. փղշտացիների դեմ պատերազմելիս Հեղիի երկու որդիները զոհվում են, և Իսրայելը հաղթվում է: Հեղին, լսելով տապանակի գերի ընկնելու մասին, կաթված է ստանում և մեռնում: (էջ 98)*

45. Քաղդեացի—*քաղդեացիները բնակվում էին Միջագետքի և Ասորեստանի հյուսիսային մասում՝ Կորդվաց լեռներում: Եղել են պատերազմող ժողովուրդ: (էջ 99)*

46. Կեփազ—*ազնիվ, մաքուր ոսկի: (էջ 99)*

47. Կորխ—*ըստ Հին կտակարանի, Ղևտացիների առաջնորդ, որն Աբիրոնի և Դաթանի հետ ապստամբեց Մովսեսի և Ահարոնի դեմ, սակայն արժանացավ աստվածային պատուհասի և բնաջնջվեց իր կողմնակիցների հետ միասին: (էջ 102)*

48. Դաթան—*ըստ Ս. Գրքի, Դաթանը Կորխի հետ ապստամբեց Մովսեսի և Ահարոնի իշխանության դեմ և պատժվեց: (էջ 102)*

49. Որ վասն անկեալ աշտարակին ի Սելովամ տասնևութին—*վայր Երուսաղեմի մոտ, ուր կար ջրհոր և աղբյուր, ինչպես նաև աշտարակ, որի կործանումից, ըստ Ս. Գրքի, զոհվել են 18 մարդ: (էջ 103)*

50. Կամ ընդ գնից Գալիլէին զարիւն խառնեալ Պիղատոսին—*Պիղատոսը, ծագումով պոնտացի, Իսրայելի հռոմեական կառավարիչ էր: Ըստ Ս. Գրքի, երբ Հիսուսը հրեա քահանայապետի կողմից դատապարտվում է, բերում են Պիղատոսի մոտ, որպեսզի սա մահվան դատա-*

վճիռ արձակի։ Պիղատոսը, նկատելով Հիսուսի անմեղությունն ու հրեաների չարությունը, ուզում է ազատել Հիսուսին, սակայն չցանկանալով ընդհարվել հրեաների հետ՝ համաձայնում է դատապարտել Քրիստոսին։ Ակնարկում է ավետարանական դրվագը, թե Պիղատոսը գալիլեացիներից ոմանց արյունը խառնել է մատուցված զոհերի արյանը (Ղուկ., ԺԳ, 1—5)։ Գալիլեան գավառ էր Հյուսիսային Պաղեստինում, Միջերկրական ծովի ափին։ Բնակիչները կոչվում էին գալիլեացիներ։ (էջ 103)

51. Աբիրոն—Կորխի գործակիցներից մեկը (տե՛ս Կորխ և Դադան)։ (էջ 110)

52. Կայեն—ըստ ավանդության՝ առաջին մարդասպանը, որն սպանել է իր եղբայր Աբելին։ Կայենը մեղանչում է աստծու դեմ, արհամարհում աստծու կողմից պահանջվող խոստովանությունն ու ապաշխարությունը։ (էջ 112)

53. Փարաոն—Եգիպտական թագավոր։ Հայտնի են մի շարք փարավոններ։ Այստեղ նկատի ունի այն փարավոնին, որի ժամանակ իսրայելացիները ելան Եգիպտոսից։ Նրանց հետապնդելիս փարավոնը ընկղմվեց Կարմիր ծովը։ (էջ 112)

54. ԶԱմաղեկայ չարեօք զանցեր, զնոր Իսրայէլ չարչարեցեր—Ամաղեկը երկրամաս էր Արաբական թերակղզու հարավ-արևմտյան կողմում, ուր ապրում էին ամաղեկացիները, հզոր մի ժողովուրդ։ Կարմիր ծովն անցնելիս՝ հրեաները ենթարկվում են սրանց հարձակմանը։ (էջ 113)

55. Երիքով—քանանացիների առաջին քաղաքը, որ գրավեց Հեսուն։ Երիքովի պարիսպներն հրաշքով կործանվում են, և Հեսուն ջնջում է Քանանի երկիրը ի բնակչությանը բնաջնջում։ (էջ 114)

56. Քանան. Քանանացիներ—քանանացիները, ըստ Աստվածաշնչի, ծագում էին Նոյի թոռ Քանանից, իսկ նրանց երկիրը կոչվում էր Քանանու երկիր։ Հարուստ, բայց կռապաշտ ցեղ, որին չարությունների համար աստված մատնում է իսրայելացիների ձեռքը. Հեսուն գրավում է Քանանի երկիրը և բնակչությանը բնաջնջում։ (էջ 114)

57. Յեսու—իսրայելացիների անվանի զորավար և Մովսեսի հաջորդը։ Հեսուն անցնում է Հորդանանը և տիրում Ավետյաց երկրին։ Հաղթելով քանանացիներին՝ երկիրը բաժանում է իսրայելացիներին։ Հեսուն կռվում է նաև ամաղեկացիների դեմ։ (էջ 114)

58. Զերդ Գողիար Փղշտացին—նկատի ունի հսկա Գողիաթին, որը մենամարտի է դուրս գալիս Իսրայելի զորքի դեմ, բայց որին սպանում է Դավիթը։ Գողիաթը փղշտացի էր։ Նրա նախնիները բնակվում էին Քանանի հարավային մասում։ (էջ 114)

59. Անտիոքոս—նկատի ունի Սելևկյան թագավոր Անտիոքոս Երրորդ Մեծի որդուն՝ Անտիոքոս Չորրորդ Եպիփանին, որ թագավորել է մ. թ. ա.

175—163 թթ.։ Սա ճնշել է հրեաների (Հուդա, Հուդայան տուն) ապստամբությունը, թալանել Երուսաղեմի տաճարը և 10 հազար հրեաների վարել ստրկության։ Երուսաղեմի Եհովայի տաճարը վերածել է հունական Զևսի տաճարի, որը և պատճառ է դարձել Մակաբեյացիների ապստամբության։ (էջ 115)։

60. Ուրախ լիցին արդարք ի Տէր, մինչ ճառուցման լինին դատեր—տե՛ս Գիրք Սաղմոսաց ԴԶ, 12։ (էջ 119)

61. Բելիար—չարության մարմնացում, սատանա. տե՛ս Բ. Կորնթացոց, Զ. 15։ (էջ 123)

62. Ղազարոս—ըստ Ս. Գրքի, Քրիստոսի բարեկամն ու աշակերտը, Մարիամի եղբայրը, որ ծանր հիվանդությունից հետո մեռնում է, սակայն Քրիստոսը հրաշքով վերակենդանացնում է։ (էջ 123)

63. Ֆռանկ—եվրոպացի։ Հայ մատենագրության մեջ ֆռանկք հնում կոչել են կաթոլիկ եվրոպացիներին։ (էջ 128)

64. ...զԲաբէլ անձնձ խիստ անեալ—ըստ Ս. Գրքի, այն աշտարակը, որ կառուցեցին Նոյի զավակները ջրհեղեղից 120 տարի անց, և այն հոյակապ քաղաքը, որը հետագայում ավերվեց դավադրությամբ, որով և ընկավ Բաբելոնի փառքը։ (էջ 129)

65. Ապիրատ—Գրիգոր Ապիրատ, Շնորհալու Շահան (Զորավար) անունով կրտսեր եղբոր տղան, որն ականատես եղավ Եդեսիայի գրավմանն ու կոտորածին։ Ապիրատի խնդրով է, որ Շնորհալին գրեց «Ողբ Եդեսիոյ» երկը։ 1194—1203 թթ.՝ հայոց կաթողիկոս (Գրիգոր Զ)։ (էջ 138)

# Դ. ՑԱՆԿ «ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ»-Ի ՁԵՌԱԳՐԵՐԻ (ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)[1]

| Ձեռագրի № | Գրչության ժամանակ | Գրչության վայր | Գրիչ (ծաղկող, ստացող) | Ողբի էջերը | Բովանդակությունը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4207 | 1284 թ. | Ադանա | Կոստանդին Բուռալթ | 318բ—347ա | փոփոխված |
| 1548 | 1357 թ. | Տէր Յովհաննէսի անապատ | Սարգիս | 220ա—268բ | փոփոխված |
| 5707 | 1383–86 թթ. | Երնջակ | Յակոբ վարդ ծաղկող Կարապետ | 239—253 | փոփոխված |
| 5255 | 13-րդ դար (թե՞ 15-րդ) | — | — | 40ա—81ա | Ն. Շնորհալի, Բանք չափաւ |
| 7101 | 1621 թ. | Գետաթաղ | Ղուկաս գրիչ, Յոհան | 77—110բ | փոփոխված |
| 8575 | 1632 թ. | Ամիթ | Սարգիս արեղայ | 248բ—297բ | փոփոխված |
| 1541 | 1614 թ. | Կաֆա | Զաքարիա արեղա | 183ա—227ա | փոփոխված |
| 1558 | 1643 թ. | Ղարասու | ծաղկող Խաչիկ | 197բ—253բ | փոփոխված |
| 5960 | 16-րդ դար (17-րդ) | — | — | 199—247 | Ն. Շնորհալի, Բանք չափաւ |
| 2079 | 1622 թ. (1672) | Լւով | Յովհաննէս Մոկացի | 156ա—174բ | փոփոխված |
| 2407 | 1624 թ., 1642թ. | Շօշ | Յոհան երէց | 218բ—271ա | Տաղարան |
| 1631 | 1789 թ. | Թալաս (Կեսարիա) | Գէորգ արեղա | 1ա—45բ | Ողբ Եդեսիոյ, Հանելուկք |
| 5924 | 1822 թ. | Լիմ անապատ | Աբրահամ վրդ. Գոլոցի | 2ա—60բ | Ողբ Եդեսիոյ |
| 1539 | 1656 թ. | Մարզուան | Միքայէլ երէց | 238բ—302բ | Ն. Շնորհալի, Բանք չափաւ |
| 6597 | 18-րդ դար | — | Յակոբ քհ. Սուքիասյանցի ձեռագրերից | 1—56 | Ողբ Եդեսիոյ |
| 71 | 1753 թ. 1755 թ. | Կեսարիա (ա) Ադրիանուպոլիս | Աբրահամ Աստապատցի | 130ա—168ա | փոփոխված |

1. Սկզբում բերված են այն ձեռագրերը, որոնց հիման վրա պատրաստված է համեմատական բնագիրը։

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 424 | 17-րդ դար | Կաֆա | — | 245բ—246ա* | Գանձարան |
| 912 | 1779-1784-85 | Կ. Պոլիս | — | 149ա—164բ | Ժողովածու |
| 1540 | 1633 թ. | Ամասիա | Միք. դպիր, ստ. Զաքարիա դպիր | 230ա—298բ | Ն. Շնորհալի, Բանք չափաւ |
| 1544 | 1637 կամ 1623 թ. | Ղարասար | Գրիգոր երեց | 212ա—264բ | Ն. Շնորհալի, Բանք չափաւ |
| 1546 | 17-րդ դար | — | Ղուկիանոս վրդ. | 165բ—220ա | Ժողովածու |
| 1629 | 1821 թ. | Կ. Պոլիս | Յոհաննէս սարկաւագ | 4ա—57ա | Ժողովածու |
| 1630 | 1821 թ. | Կ. Պոլի՞ս | — | 1ա—54ա | Ողբ Եդեսիոյ |
| 1756 | 17-րդ դար | — | — | 270—323 | Ժողովածու |
| 2027 | 1680 թ. | Էջմիածին | Յովսէփ | 190ա—190բ* | Ժողովածու |
| 2672 | 1607 թ. | Կաֆա | Սա. Թոխաթցի | 236ա—237ա* | Գանձարան |
| 3218 | 1645 թ. | — | Կարապետ քահանայ | 188բ—241բ | Տաղարան |
| 3226 | 1802 թ. | Տրապիզոն | ստացո՞ղ տէր Յոհաննէս | 1ա—54բ | Ողբ Եդեսիոյ |
| 3267 | 1833 թ. | Շուշու քաղաք | Սերոբէ (Մանուկի Աստուածատուրի թոռ) | 1ա—66բ | Ողբ Եդեսիոյ |
| 3421 | 17-րդ դար | — | — | 185բ—237բ | Ժողովածու |
| 5038 | 19-րդ դար | Լիմ անապատ | — | 107ա—127ա | Ժողովածու |
| 5056 | 18-րդ դար | — | Յակոբ վրդ. | 98ա—101բ* | Ժողովածու |
| 5121 | 1825 թ. | Լիմ անապատ | Յովակիմ Կարնեցի | 1ա—57ա | Ժողովածու |
| 5837 | 19-րդ դար | — | — | 1—39բ | Ողբ Եդեսիոյ |
| 6027 | 1743—1787 թթ. | — | Անտոն վրդ. | 150ա—200բ | Ժողովածու |
| 6998 | 1839 թ. | Ս. Պետերբուրգ | Սամուէլ Աբրահամեանց | 63բ* | Ժողովածու |
| 7219 | 1641 թ. | Թոխաթեայ | Մելքիսէթ Թոխաթեցի | 291—352 | Ժողովածու |
| 7244 | 1828 թ. | Կարին | ոմն դպիր | 2ա—58բ | Ողբ Եդեսիոյ |
| 8121 | 1768 թ. | Մուշ, Ս. Կարապետ | Մատթէոս գրագիր | 150ա—200բ | Ժողովածու |
| 8392 | 1824 թ. | Կարին | — | 1—57բ | Ողբ Եդեսիոյ |
| 8436 | 1841 թ. | Կարին | տիրացու Յովհան Պօղոսեան | 28ա—83բ | Ժողովածու |

* Աստղանիշով նշվածները պատառիկ են կամ թերի բնագիր:

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 8437 | 1826 թ. | Կ. Պոլիս | Թովմաս սարկավագ | 1 —74 | Ողբ Եդեսիոյ |
| 8569 | 1643 թ. | — | — | 152 բ—203բ | Ժողովածու |
| 8735 | 18-րդ դար | — | — | 8ա—12ա* | Ժողովածու |
| 8740 | 18—19-րդ դդ. | — | — | 36ա—43բ | Ժողովածու |
| 8755 | 18-րդ դ. 17-րդ դ. | — | գրիչ Մարգար | 153 բ—206բ | Ն. Շնորհալի. Բանք չափաւ |
| 8989 | 1813 թ. | — | — | 2 —29բ* | Ողբ Եդեսիոյ |
| 9035 | 1835 թ. | Աստրախան | Յարութիւն Ղուկասեան Յարիջանեանց Փատկեցի | 1ա—14բ | Ժողովածու |
| 9426 | 18-րդ դար | — | — | 8ա—12ա* | Ժողովածու |
| 9736 | 1852 թ. | Ախալցխա | — | 4ա—57բ | Ողբ Եդեսիոյ |
| 9883 | 1826 թ. | Խրիստոպոլիս | Աւետիս Պասմաճեան | 3ա—43բ | Ողբ Եդեսիոյ |
| 9887 | 19-րդ դար | Բերված է Նոր Նախիջևանից | — | 1ա—20ա* | Ողբ Եդեսիոյ |
| 9933 | 19-րդ դար | — | — | 1ա—8բ* | Ողբ Եդեսիոյ |
| 10090 | 18-րդ դար | — | — | 4ա—61ա | Ողբ Եդեսիոյ |
| 10285 | 19-րդ դար | — | — | 1ա—53բ | Ողբ Եդեսիոյ |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. *Ներսես Շնորհալին և նրա «Ողբ Եդեսիոյ»-ն* . . . 5—18
2. *Ողբ Եդեսիոյ (բնագիր)* . . . . . . . 19—138
3. *Բանասիրական դիտողություններ* . . . . 139—148
4. *Ծանոթագրություններ* . . . . . . 149—154
5. *Ցանկ ձեռագրերի* . . . . . . . . 155—157



ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
НЕРСЕС ШНОРАЛИ

# ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ


Տպագրվում է Հայկ. ՍՍՀ ԳԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Նկարիչ Կ. Թ. Տիրատուրյան
Տեխնիկական խմբագիր Մ. Ա. Կափլանյան
Սրբագրիչ Կ. Խ. Ամիրխանյան

ՎՖ 03172 Հրատ. 3937 Պատվեր 562 Տպաքանակ 2000

Հանձնված է արտադրության 8/VIII 1973 թ.,
Ստորագրված է տպագրության 18/IX 1973 թ.,
Տպագր. 10,0 մամուլ, հրատ. 7,27 մամուլ, պայման. 8,4 մամուլ.
Թուղթ № 1, 84×108 1/32: Գինը 97 կոպ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220051248